Վաշինգտոնի գագաթնաժողովից ի վեր մենք Հայաստանում որեւէ խոշոր բողոքի ցույց չենք տեսել: Շատ ընդդիմադիր ուժեր քննադատել են Հայաստանի կառավարությանը, բայց դա չի վերաճել լայնածավալ բողոքի ցույցերի: Քաղաքական ուժերի վարկանիշը որոշվում է ընտրություններով, եւ մենք ունենք ընդամենը մի քանի ամիս՝ սպասելու:

Կարդացեք՝ էջ 4

Փաշինյանի ռեժիմը, թվացյալ չեզոքություն պահելով, իրականում խաղադրույք արեց Ուկրաինայի հաղթանակի վրա. նախ՝ սառեցրեց հարաբերությունները ՀԱՊԿ-ի հետ, հումանիտար աջակցություն ուղարկեց Ուկրաինա եւ պատերազմն օգտագործեց՝ Հայաստանը ռուսական ազդեցությունից Թուրքիա-Ադրբեջան ազդեցության գոտի տեղափոխելու համար:

Կարդացեք՝ էջ 5



Երբ իշխանությունը հետեւողական կերպով կվարկաբեկի Եկեղեցին եւ անոր հոգեւոր դասը, դժվար է զայն ներկայացնել իբրեւ պարզ բարեփոխման գործընթաց: Անշուշտ, Հայոց եկեղեցին եւս ունի իր ներքին խնդիրները, որոնք պետք է սրբագրվեն: Սակայն խնդիրների լուծումը եւ կառույցի հեղինակազրկումը կամ քանդումը տարբեր բաներ են:

Կարդացեք՝ էջ 6


# Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

**ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ**

**N 25 (4160), 24 փետրվար, երեքշաբթի, 2026**

**www.hraparak.am**




Ինչպես տեղեկացրել ենք, ներկուսակցական ընտրություններից հետո ՔՊ-ում արշալույսները խաղաղ չեն: Պատգամավորական ֆրակցիայում խուլ դժգոհություն կա՝ ներկուսակցական ընտրություններում ոմանց ստացած ձայների առումով, եւ հիմնավոր կասկածներ, որ ՔՊ թեկնածուները չեն ենթարկվել կուսակցական որոշմանն ու գաղտնի քարոզարշավ են արել, ուղղորդել ընտրիչ պատվիրակներին, ինչի արդյունքում էլ ոմանք անբացատրելի բարձր քվեներ են ստացել, ոմանք՝ անբացատրելի ցածր: Մեզ ասացին, որ որոշ պատգամավորներ Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպում են պահանջել, որպեսզի քննարկեն այս քվեարկության արդյունքները եւ բացահայտեն զեղծարարներին: Գուցե հարցը քննարկեն առաջիկա հինգշաբթի՝ կուսակցության Նախաձեռնող նիստի ժամանակ: Միեւնույն ժամանակ, ՔՊ շարքերում վստահ են, որ զեղծարարությունների բացահայտման գործընթաց չի լինելու՝ հո աշխարհով մեկ չՁն խայտառակվելու, որ անգամ ներկուսակցական ընտրություններն են կեղծում, եւ Նիկոլ Փաշինյանը, սովորության համաձայն, բոլորին «կուտ է տալու»՝ ասելով, թե կարեւոր չէ՝ ով որ տեղում է, իրենց հաղթանակի պարագայում ոչ մեկն անգործ եւ չգնահատված չի մնա: Նա բոլորից լավ է հասկանում, որ հակառակ դեպքում «աբիժնիկներն» ընտրությունները կբոյկոտեն, չեն աշխատի, նույնիսկ կարող են հակառակորդների օգտին աշխատել, եւ հիմա յուրաքանչյուր ձայնի ու յուրաքանչյուր ձայն բերողի համար կյանք է տալիս:

«Հանրապետություն» կուսակցության նախագահ, Հայաստանի թիվ մեկ հակառուս Արամ Սարգսյանը, որի քաղաքական գաղափարախոսությունը հիմնված է Ռուսաստանի դեմ, պարզվում է՝ իրական կյանքում ընդունում է, որ Հայաստանը չի կարող պոկվել Ռուսաստանից, քանի որ մեր տնտեսությունն իր բոլոր թելերով կապված է ռուսական շուկայի հետ: Հայ գործարարներից մեկը, որը վերջերս հանդիպում է ունեցել Արամ Սարգսյանի հետ, մեզ պատմեց, որ մասնավոր զրույցում Զավենիչն ընդունել եւ խոստովանել է, որ Հայաստանի ապագան առանց Ռուսաստանի մշուշոտ է, քանի որ մեր տնտեսությունը գրեթե ամբողջովին կախված է ռուսական շուկայից: Ի դեպ, այդ կախվածությունը հատկապես մեծացել է Նիկոլ Փաշինյանի իշխանության օրոք, 2-րդ նախագահը, օրինակ, իր վերջին ասուլիսում նշեց, որ 2025-ին ՀՀ խոշոր հարկատուների առաջին տասնյակում 8 կազմակերպություն իրենց բիզնես գործունեությունն իրականացնում են ՌԴ-ի հետ ներկրումների եւ արտահանումների միջոցով:

## Մարդը՝ լուսանցքում

Ամեն օր ափսոսանքով արձանագրում եմ, թե ինչքան գրագետ, խելացի, ազնիվ, հայրենասեր մարդիկ կան, որոնք առողջ են դատում, հասկանում են, թե ուր է գնում մեր երկիրը, տարբերում են թացը չորից, բայց, ցավոք սրտի, որոշում կայացնողների մեջ չեն եւ մեր երկրի ընթացքին միջամտելու շատ սահմանափակ հնարավորություններ ունեն: Մեկը բժիշկ է, մյուսը՝ գիտնական, երրորդը՝ IT ոլորտի աշխատակից, չորրորդը՝ ուսուցիչ, վեցերորդը փոքր բիզնես ունի: Այս բոլոր մարդիկ ո՛չ իշխանության մեջ են, ո՛չ՝ ընդդիմության: Նրանք՝ բոլորը, երկրի կառավարումից եւ ընտրապայքարից դուրս են մնացել: Նրանց մասնակցությունը երկրի կառավարմանը սկսվում եւ ավարտվում է քվեարկության գնալով, ինչը նրանք բարեխղճորեն կատարում են, չնայած մեծ հույսեր չունեն, թե իրենց ընտրած անձինք եւ ուժերը կգան իշխանության: Այնպես է ստացվել, որ կուսակցական գործունեությունը, քաղաքական պայքարին, ընտրություններին մասնակցելն ու առաջադրվելը մեզանում հիմնովին վարկաբեկվել են, եւ հասարակության առողջ ուժերը դուրս են մնացել այդ ասպարեզից՝ իրենց տեղը զիջելով անմաքուր նպատակներ ունեցող, ոչ շատ գրագետ, հայրենիքի մասին շատ չանհանգստացող, հստակ սկզբունքներ չունեցող անհասկանալի մարդկանց: Մեր երկրում հենց այս տեսակն է գալիս իշխանության եւ պայքարում իշխանության գալու համար: Սակայն այդ նույն իշխանության վարքագծի հետեւանքները կրում ենք մենք՝ նույն այդ բժիշկը, գիտնականը, լրագրողն ու ուսուցիչը, որոնք, մեծ հաշվով, վատ քաղաքացիներ չեն, անտարբեր չեն իրենց պետության ճակատագրի հանդեպ, խելացի են եւ շատ ավելի լավ կկառավարեին այս պետությունը, քան կյանքի գնով իշխանության ձգտող ուժերն ու անորակ մարդիկ, որոնց մենք մշտապես տեսնում ենք իշխանության ղեկին, կառավարության կաբինետներում:

*«Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունները մտադիր են պատգամավոր Թադեւոս Ավետիսյանի թեկնածությունն առաջադրել Մրցակցության եւ սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի անդամի պաշտոնի համար՝ որպես համաձայնեցված միասնական թեկնածու: Գեղամ Գեւորգյանի ղեկավարած հանձնաժողովի անդամ դառնալուց հետո Թադեւոս Ավետիսյանը պետք է ոչ միայն պատգամավորական մանդատից հրաժարվի, այլեւ դադարեցնի քաղաքական գործունեությունը, քանի որ սա ապաքաղաքական մարմին է: Այս պահին ՀՅԴ-ական Թադեւոս Ավետիսյանը «Հայաստան» խմբակցության պատգամավոր է, սակայն, ըստ ամենայնի, առաջիկա ընտրությունների թեկնածուների ցանկում չի լինի:*

## ՍԱՐՍԱՓՈՒՄ ԵՆ «ԳՅՈՒՄՐԻ 2»-ԻՑ

Իշխանությունը բարձրաձայնում է իր վախերը. շուրջ մեկ շաբաթ է՝ իրար հերթ չտալով, քարոզչական տեռոր են իրականացնում, թե խորհրդարանական ուժերին հայտ ներկայացնող ընդդիմադիր խոշոր խաղացողները «Գյումրի 2» են ուզում իրականացնել: Հիշեցնենք, որ շուրջ 1 տարի առաջ Գյումրիում տեղական ընտրություններից հետո ընդդիմադիր ուժերը միավորվեցին՝ թույլ չտալով, որ «Քաղաքացիական պայմանագիրն» այնտեղ իշխանություն վերցնի: Փաշինյանն ու նրա խմբակը հետընտրական այս կոնսոլիդացիան փորձում են ներկայացնել որպես մի արատավոր, հրեշավոր իրողություն: Մինչդեռ դա բնական երեւույթ է, որ իշխանությանը տապալելու համար ընդդիմադիրները միմյանց հետ համագործակցում են, կոալիցիա կազմում, հուշագրեր ստորագրում եւ համատեղ վերցնում են իշխանությունը: Իրականում, այս քարոզչության թիրախը գործարար Սամվել Կարապետյանի գլխավորած ուժն է, որը դիրքավորվել է նախկինների եւ ներկաների արանքում ու բոլոր շանսերն ունի՝ իր շուրջ համախմբում ապահովելու եւ իշխանությունը վերցնելու հարցում: «Գյումրի 2»-ի մասին թմբկահարմամբ իշխանությունները թերեւս փորձում են հանրության մոտ կարծիք ստեղծել, թե Սամվել Կարապետյանն էլ է նախկին ու շատ չի տարբերվում Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի մասին հորինված կերպարից: Իրականում պարզ է, որ իշխանությունը սարսափում է այս սցենարից, հակառակ դեպքում անխնա հակաքարոզչություն չէր իրականացնի:

ԺԱՄԱՆԱԿ

# ԴԱ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՄՈՏԵՑՈՒՄ ՉԷ, ԴԱ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՄՈԼՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԳՅՈՒՄ

Էջը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Երջին շրջանում Ֆեյսբուքում շատերն են ակտիվացել, այդ թվում՝ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը: Նա խոսում է ՀՆԱ-ի ավելացման մասին, հայտարարում, որ արտաքին պարտքը թեպետ բացարձակ թվով կրկնապատկվել է, սակայն իրականում նվազել է: 2017 թվականին Հայաստանի ՀՆԱ-ն 11,5 մլրդ դոլար է եղել, 2025-ին՝ 29,2 մլրդ դոլար, եւ պետական պարտք-ՀՆԱ հարաբերակցությունը նվազել է: Մինչդեռ ՀՆԱ-ի այդ աճի հիմնական մասը խաղային բիզնեսն է, դա ռեալ տնտեսական աճ չէ, այլ՝ տոքսիկ աճ:

Ֆինանսների նախկին նախարար **Վարդան Արամյանը**, «Հրապարակի» հետ զրույցում խոսելով Պապոյանի հայտարարությունների մասին, նկատում է. «Ես ընդհանրապես այդ պարզունակ համեմատությունը չեմ հասկանում: Մարդիկ ինչպե՞ս են ներկայիս տնտեսական կյանքը համեմատում, ասենք, 2017 թվականի տնտեսական կյանքի հետ: Սա ամենասխալ ու պարզունակ մոտեցումն է, այն պրոֆեսիոնալ մոտեցում չէ, ինչպես նաեւ՝ հասարակությանը մոլորության մեջ է գցում: Նույն սկզբունքով եկեք 2008-ի ՀՆԱ-ն համեմատենք 1996-ի ՀՆԱ-ի հետ, այն անգամներով ավել է: Կամ, ասենք, 2016-ի ՀՆԱ-ն եկեք համեմատենք 2006-ի ՀՆԱ-ի հետ, կտեսնենք, որ էական ավել է ստացվում: Չի կարելի նման բան անել: Ես հասկանում եմ, որ նրանք քաղաքական կուրս ունեն, որ պետք է ցույց տան՝ ՀՆԱ-ն աճել է, բայց դա բնական է՝ պետք է աճի: Տնտեսական աճ կա, ակնհայտ է, որ ՀՆԱ-ն պետք է չաճի: Այստեղ հարցն այն է, թե ինչու տնտեսական ցուցանիշների հետ մեկտեղ չի լավանում հասարակության սոցիալական վիճակը եւ դեռ մի բան էլ՝ ավելի է վատանում: Պետք է հասկանանք, թե ինչի մասին է խոսքը, ի վերջո՝ հասարակությունը միայն բարձր եկամուտ ստացողներից չէ բաղկացած: Տնտեսական քաղաքականությունն մշակողների թիվ մեկ մարտահրավերն այն է, որ միավոր տնտեսական աճից շատ ավելի օգտվում են միջին եւ բարձր եկամուտ ունեցողները, քան սոցիալականապես անապահովներն ու խոցելիները: Ինչո՞ւ են տնտեսական քաղաքականություն մշակողները ջանքեր գործադրում, որպեսզի միջամտեն այն բանին, որ երեւույթը շարունակական չլինի:

Այն հանգեցնում է եկամուտների եւ ունեցվածքի բեւեռացման: Որքան քո տնտեսությունն ու հասարակությունը բեւեռացված են, այնքան փոքրանում է տնտեսական քաղաքականության արդյունքում նոր արժեքներ ստեղծելու հնարավորությունը, ու տնտեսական պոտենցիալը թուլանում է: Մեկ միլիոն դրամը 1 անձի գրպանում եւ 10 անձի գրպանում՝ տարբեր երեւույթներ են առաջացնում: Մեկ անձը կարող է այդ գումարից միայն 200 հազար դրամը ծախսել, մնացածը պահել: Արդյունքում՝ քո տնտեսական կյանքին չի մասնակցում: Սակայն, եթե 1 միլիոնը 10 անձի գրպանում է, քո տնտեսական կյանքն ավելի է ակտիվանում: Ես այս օրինակը բերում եմ, որպեսզի հասկանալի լինի, թե ինչու է բեւեռացվածությունը վատ: Երբ նայում ենք տնտեսական ցուցանիշներին, այո, 2018-ից հետո նկատում ենք աճ: 2025 թվականին ցուցանիշի աճ ենք արձանագրել 9,2 տոկոսով, ինչն իսկապես բարձր է, դրանից առաջ՝ 2024-ին, ունեցել ենք 8,2 տոկոս աճ: Ի՞նչն է խնդիրը, որ հասարակության մոտ աղքատությունը խորանում է, իսկ լավագույն դեպքում՝ մնում է նույն հարթության վրա: Խնդիրն այն է, որ տնտեսական քաղաքականության մեջ կան տարբեր խոռոչներ: Հարկաբյուջետային քաղաքականությունն իր վերաբաշխման ֆունկցիան այդքան էլ լավ չի կատարում՝ կառավարության ծրագրերի արդյունքում: Մեկ օրինակ բերեմ: Ունենք եկամտային հարկի վերադարձի արդյունքում բնակարան ձեռք բերելու ծրագիր: Նախորդ կառավարությունը, ես եւս, հայտարարեցինք, որ այն ժամանակավոր բնույթ է կրելու: Մեզ զսպաշապիկ էին հագցնում, սակայն այդ ամենի նպատակը բնակարանաշինությանն իմպուլս տալն էր, իսկ հետո՝ հետ քաշվելը: Նոր իշխանությունները 2018-ին հայտարարեցին, որ այն պոպուլյար է, հրաշալի է եւ այլն: Ես մի հաշվարկ էի կատարել, որ այդ գործիքից օգտվում են միայն բարձր եկամուտ ունեցող անձինք: Որպեսզի 55 միլիոն դրամանոց բնակարան գնես, դու առնվազն պետք է 1,8 միլիոն աշխատավարձ ստանաս: Այսինքն՝ բացառում եմ, որ սոցիալապես անապահով մարդը կարող էր այդ ծրագրի շրջանակներում բնակարան գնել: Մեր ժամանակ ընդամենը 8 միլիարդ էր բյուջեից գնում այդ ծրագրին: 95 տոկոսով ունեւոր մարդիկ են ձեռք բերել այդ բնակարանները, միայն 5 տոկոսն է, որ դրա կարիքն իսկապես ունեցել է: Իրականում, մենք չունենք պրոգրեսիվ համակարգ, մերը ռեգրեսիվ է, այդ պատճառով էլ մեր երկրում աղքատի վիճակը գնալով վատանում է, հարուստի վիճակը գնալով լավանում է: Իմ պարկեշտությունն ինձ թույլ չի տա օգտվել այն բաներից, որոնց ես դեմ եմ արտահայտվել, թեպետ դա իմ սահմանադրական իրավունքն է, սակայն ճիշտ չեմ համարում դա: 2018 թվականին թատերաբեմ եկած կառավարության անդամներն ասպարեզ նետեցին ամբոխահաճո խոսույթ: Հայտարարեցին, որ վարկերը մարելու են, քանի որ ժողովրդին տարիներով թալանել են, տույժերն ու տուգանքները վերանալու են եւ այլն, տեսանյութերը մինչեւ հիմա առկա են: Միջին ու ցածր կրթական ցենզ ունեցող մարդիկ, լսելով այս խոսքերը, անմիջապես նետվեցին սպառում անելու՝ մտածելով, թե Փաշինյանի իշխանությունը Մոնումենտի տները քանդելու է եւ նվիրի իրենց: Սպառողական վարկերի վարքագծին նայեք, անգամներով աճում ու աճում են: Այս ամբողջը դնելով իրար կողք՝ մենք հասկանում ենք, որ մեր տնտեսական աճի կառուցվածքը սխալ է: Աճում են միայն բնակարանային շինարարությունն ու առեւտուրը, ոչ արտահանելի հատվածը միայն: Քանի որ մեր տնտեսության մեջ չենք կարողանում եկամուտները հարկել պրոգրեսիվ ձեւով, մեր երկրում շահառուն միայն բարձր եկամուտ ունեցողն է, որքա՞ն է ստանում փոքր ու միջին բիզնես ունեցողը՝ չնչին գումար: Փաշինյանի կառավարությունն ասում է, որ մարդկանց եկամուտն աճում է, այո, անվանական աշխատավարձերն աճում են, սակայն պետք է ճշգրտել գնաճով: Աճը տեղի է ունեցել 36 տոկոսով, թվում է, թե կյանքը պետք է լավացած լիներ, սակայն սխալը որտեղ է, մարդիկ տարեցտարի ավելի շատ վարկային պարտավորություններ են ստանձնում, թանկացումներ են, ահռելի աճ եւ այլն: Վարկերն աճել են 2,5 անգամ: Աշխատավարձն աճում է 36 տոկոսով, վարկերը՝ անգամներով: Իսկ ո՞վ է սպառողական վարկ վերցնում, բարձր եկամուտ ունեցող մարդն ինչո՞ւ պետք է ապառիկով հեռախոս կամ պլանշետ գնի, պարզ է, որ ցածր ու միջին եկամուտ ունեցողներն են դիմում այդ քայլին»:

# ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԼԱԴՐԱԾ ՕՐԱԿԱՐԳՆ ՈՒՆԻ ԿԵՍ ԺԱՄՎԱ ԿՅԱՆՔ

«Հրապարակի» զրուցակիցը հոգեբան **Միհրդատ Մադաթյանն** է:

**- Իշխանություններն ամեն անգամ կարողանում են այնպես անել, որ հանրությունը, անգամ ընդդիմադիր շրջանակներն ընկնեն իրենց ծուղակը՝ առաջնային հարցերը շրջանցելով, ինչ-որ անէական հարցեր բերեն առաջին պլան: Օրինակ՝ կիրակի օրվանից ակտիվ քննարկվում է Սամվել Կարապետյանի մի թիմակցի կողմից Գյումրին գյուղ անվանելու թեման: Դրանից առաջ էլ օրեր շարունակ քննարկվում էր Կարապետյանի որդու ասածը, որ իրենց ղեկավարած Հայաստանում չբավարարված կանայք չեն լինելու: Ի դեպ, այդ ընթացքում Բաքվում գտնվող մեր գերիներին ցմահ դատապարտեցին, Ալիեւը հայտարարեց, որ դա նյուրնբերգյան դատավարություն է, ու ներում չի լինելու: Եվ անգամ Արցախը հանձնելու ժամանակ չկար նման աժիոտաժ, ինչպես որ ինչ-որ մեկի կողմից Գյումրին գյուղ անվանելուց հետո առաջացավ: Ինչո՞ւ են փորձում նման անկարեւոր հարցերն օրակարգ բերել:**

- Դա գալիս է օրվա իշխանությունների սնանկ վիճակից՝ այո, այո: Նրանք այնքան սնանկ են, այն աստիճան ոչինչ չեն ներկայացնում իրենցից, որ ամենաչնչին լեզվական վրիպակն անգամ դարձնում են օրակարգ, ծիծաղի թեմա եւ այլն, բայց ո՞ւմ մոտ չի լինում լեզվական վրիպակ: Դա լրիվ նորմալ է, եւ այնպես չէ, որ ՔՊ-ականներն անթերի խոսք ունեն եւ ոչ մի վրիպակ թույլ չեն տալիս: Մի Հասմիկ Հակոբյան վերնագրով պատգամավոր կա, այդ կնոջ խոսքը լրիվ վրիպակներից է բաղկացած, դե թող նրա վրիպակներին անդրադառնան, բայց՝ չէ. նրանց թեմա է պետք՝ ընդդիմության հետ կապված: Այսօրվա դրությամբ այն օրակարգը, որ բերում է «Հայաստան» դաշինքը, «Մեր ձեւով»-ը, բավականին թեմատիկ են: Նրանք խոսում են տնտեսության մասին, խոսում են ռազմագերիների, պարտության եւ Արցախի մասին, իսկ Նիկոլի իշխանությունը չունի այդ ամենի դիմաց դնելու որեւէ նյութ, որպեսզի կոնկրետ բանավեճի դուրս գա: Առաջ ասում էին՝ նախկինները՝ էսպես, նախկինները՝ էնպես, թալան, նախկին եւ այն: 8 տարի անց նորից խոսել թալանի եւ նախկինների մասին՝ մի քիչ զավեշտալի է թվում: Ուստի փորձում են հիմա լեզվի սայթաքումը շահարկել, չեղած բանն ուռճացնել եւ այլն: Հայաստանի քաղաքացին գիտի, որ Գյումրին գյուղ չէ, քաղաք է: Սամվել Կարապետյանի որդին մեծացել է այլ միջավայրում, գուցե հայերենի հետ կապված խնդիր ունի, եւ նրա ոչ լիարժեք հայերենը դարձնել քննարկման հարց, կներեք, բայց ուղղակի նման քննարկումները երգիծական մակարդակի են, այն էլ՝ ամենացածր լեւելի: Դա քաղաքական խոսույթ չէ:

**- Իսկ ընդդիմադիրներն ինչո՞ւ են ներքաշվում այդ կեղծ օրակարգերի մեջ, սկսում հակադրվել իշխանավորներին:**

- Նրան, ում հասցեագրված է այդ ամենը, կարծում եմ, որ պետք է խոսի: Եթե չես պատասխանում, այն ուռչում է եւ դառնում մի մեծ նյութ, սակայն պատասխանելն էլ, հասկանում եմ, պատվաբեր գործ չէ, բայց կան դեպքեր, որ արժե պատասխանել: Դեպքը պետք է քննարկել առանձին: Ամեն դեպքում, եթե իշխանություններն ինչ-որ մի բան մանիպուլացնում են, ապա ճիշտ կլինի, որ տվյալ ընդդիմադիր ուժի կողմից այն հերքվի: Հակառակ դեպքում այն կարող է դառնալ վիրուսային:

**- Բայց նույն այդ իշխանություններն անթերի չեն իրենց խոսքում եւ հայտարարություններում: Կարո՞ղ ենք մի քանի նման օրինակ հիշեցնել ընթերցողին:**

- Մարդը, որը հրամայում է քաղաքացու ձեռքերը կապել, որ ինքը թքի քաղաքացու երեսին, իրավունք չունի որեւէ մեկի լեզվի սայթաքմանն անդրադառնալ: Կամ՝ մեկ ուրիշը պլյուս-մինուսով զոհվածների թիվ է ասում, կամ՝ զոհվածի մորը քարշ են տալիս Եռաբլուրում, կամ էլ ասում են՝ եկեղեցում մանկապիղծներ կան, իսկ թոշակառուն չգիտի, թե որտեղ ծախսի 10 հազար դրամ թոշակը, եւ այսպես շարունակ: Այս մտքերի կարկառուն հեղինակները որեւէ մեկի խոսքի վրա ծիծաղելու իրավունք չունեն, բայց, ցավոք, այդպես է: Մարդն ավելի բարձր է ծիծաղում այն թերությունների վրա, որոնք հենց ինքն ունի:

**- Իսկ այս քայլերով կարողանո՞ւմ են հասարակությանը շեղել, հավատացնել, որ իրենց բերած օրակարգերը կարեւոր են:**

- Վստահորեն կարող ենք ասել, որ իշխանությունների թելադրած օրակարգն ունի կես ժամվա կյանք: Օրվա իշխանությունները հասարակության համար դարձել են անհետաքրքիր: Նույնիսկ Վենսի այցն ունեցավ 2 ժամվա քննարկման կյանք, ինչպես տեսնում ենք՝ այդ մասին բոլորը մոռացան, պատկերացնո՞ւմ եք, եթե 2018-2019 թվականներին նման այց լիներ, ինչ կկատարվեր Հայաստանում: Առաջիկայում էլ Մակրոնն է Հայաստան գալու, բայց նա նախ պետք է հասկանա, թե ինչպես են իրենց առհասարակ Եվրոպայում վերաբերվում, ինքն օգտակա՞ր գործիչ է, թե՝ ոչ, թե չէ՝ հո գալով չէ՞, կարող է Զելենսկին էլ գա Հայաստան….

## Փաշինյանի նախկին խորհրդականը միացել է Աբրահամ Գասպարյանին

«Genesis Armenia» մտավոր կենտրոնը երեկ ներկայացրել է իր նոր ռազմավարությունը եւ նորացված գրասենյակը՝ ձեւակերպելով զարգացման հիմնական առաջնահերթությունները եւ քաղաքական-վերլուծական աշխատանքի նոր նշաձողը: Կառույցի հիմնադիր-տնօրենը քաղաքագետ Աբրահամ Գասպարյանն է: Նա հայտարարել է, որ կազմակերպությունը պատրաստվում է «գալիք մարտերին». «Առաջիկա 4 ամսվա ընթացքում համահայկական ամբողջ ռեսուրսը պետք է մոբիլիզացնել՝ առաջին հերթին կասեցնելու մայրամուտի այն ընթացքը, որը վերջին 5 տարվա ընթացքում մեր պետությունը բռնել է, եւ գնում է դեպի ազգային ինքնիշխանության եւ ազգային գերիշխանության լիակատար տապալում»: Ուշագրավ է, որ կազմակերպության ծրագրերի եւ նախագծերի ղեկավարը քաղաքական գիտությունների դոկտոր Արսեն Գասպարյանն է, որը 2018 թվականին Նիկոլ Փաշինյանի գլխավոր խորհրդականն էր՝ արտաքին քաղաքականության գծով, սակայն ընդամենը մեկ տարի աշխատեց. 2019 թվականին ազատվեց պաշտոնից եւ այլեւս ՔՊ-ական իշխանությունների հետ առնչություններ չի ունեցել:

## ՔՊ-ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԴԱՐ-ԹԱՓԱՆՑԻԿ ՉԼԻՆԵԼՈՒ ԵՎՍ ՄԵԿ ՓԱՍՏ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունում չեն դադարում կրքերն ու «ռազբորկաները»՝ խորհրդարանական ընտրությունների ընտրական ցուցակի ձեւավորման քվեարկության շուրջ: Անցած շաբաթ տեղի ունեցած եռօրյա ընտրություններից հետո իշխող թիմում դժգոհության մեծ ալիք է առաջացել: Ոմանք կարծում են, որ ցուցակի շուրջ ներկուսակցական ընտրություններն արդար եւ թափանցիկ չեն եղել, այլ ուղղորդված են եղել եւ շատ սուբյեկտիվ:

Բանն այն է, որ ընտրություններից առաջ արգելված էր կուսակցության պատվիրակների շրջանում քարոզարշավ անելը: Թեկնածուները կարող էին ընդամենը ֆեյսբուքյան իրենց էջերում գրառումներ անել եւ քվե խնդրել կուսակից ընտրիչներից, որոնց թիվը 1000-ից մի փոքր անցնում էր: Սակայն ընտրությունների արդյունքներն այնպիսի արտասովոր եւ անհավանական պատկեր են ուրվագծել, որ շատերի մոտ այլեւս կասկած չկա, որ տակից ոմանց համար լավ էլ ուղղորդել են, որոշներն էլ իրենք են իրենց հարցերը լուծել՝ բարեխոսել պատվիրակների մոտ: Մի բան փաստ է, որ ՔՊ-ում, ինչպես օրեր շարունակ թմբկահարում են, դեմոկրատական ազատ եւ արդար ընտրություններ չեն եղել, եթե անգամ ներկուսակցական ընտրություններում են այս մարդիկ կեղծում, ապա սին են այն հավաստիացումները, թե իրենք ո՛չ նախորդ, ո՛չ էլ գալիք ընտրությունները չեն կեղծել ու չեն կեղծելու:

Տեղի ունեցած մանիպուլյացիաներն առավել ցցուն երեւում են ՔՊական մարզպետների ստացած ձայներից: Անգամ թիմում ակնկալել են, որ գործող պատգամավորները, գործադիրի անդամները, որոնք ի պաշտոնե առավել ակտիվ կուսակցական աշխատանքով են զբաղված, քաղաքական հայտարարություններ են անում եւ ծանոթ են հանրության լայն շերտերին ու կուսակցական շարքերին, ավելի շատ ձայներ կստանան, քան մարզպետները: Ընդունենք, որ մարզպետներից յուրաքանչյուրին կարող էին իրենց ղեկավարած մարզի պատվիրակները միայն ձայն տալ, մի քանի համայնքի տարածքային կառույցների անդամները, ինչպես նաեւ՝ կոլեգաները կամ նրանց ենթակաները: Այսինքն՝ հաշվարկում էին, որ այս ամենի հանրագումարում առավելագույնը 100-150 ձայն պետք է նրանք հավաքեին, սակայն կան մարզպետներ, որոնք իրենց ստացած ձայներով տեղ են զբաղեցրել ցուցակի առաջին 50-յակում: Ամենաշատ քվե ստացել է Լոռու մարզպետ Արեն Մկրտչյանը՝ 500 ձայն, որն ամիսներ առաջ է խորհրդարանից Լոռի գործուղվել, պատգամավորի կարգավիճակում էլ առանձնապես ակտիվ չէր, մեկ-երկու էմոցիոնալ ելույթներ է ունեցել՝ նախկինների թեմայով: Հաջորդը Փաշինյանի քավոր, Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանն է՝ 308 ձայնով, ապա՝ Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանը՝ 294, 3-ն էլ առաջին 50 հոգու մեջ են մտել, սակայն Մովսիսյանը ստիպված է տեղը զիջել կանանց, քանի որ առաջին 50 հոգու մեջ առկա կանանց քանակը չի բավարարում օրենքով պարտադիր համարվող կանանց քվոտան լրացնելուն:

Հաջորդ մարզպետը, որը կրկին բարձր ձայներ է ստացել, նախկին ՀՀԿ-ական համայնքապետ Վահրամ Խաչատրյանն է՝ 240 ձայն: Այսինքն ստացվում է՝ ՔՊ-ում մի կողմից քլնգում են նախկիններին, մյուս կողմից լավ էլ արժեւորում ու տեղ են տալիս նախկին ռեժիմի կամակատարներին: Շիրակի մարզպետ Դավիթ Առուշանյանն էլ քիչ ձայներ չի ստացել՝ 224, չնայած Յոթ վերքում պատարագից հետո համառ լուրեր էին շրջանառվում, որ շուտով հրաժեշտ է տալու պաշտոնին, քանի որ Փաշինյանը դժգոհ է՝ կեղծ պատարագին անհրաժեշտ մասնակցություն չի ապահովել: Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն էլ վատ թվեր չունի՝ 207 ձայն: Նախկինների մեկ այլ ներկայացուցիչ՝ Վայոց Ձորի ղեկավար Վահագն Արսենյանը՝ Աշոտ Արսենյանի որդին, 189 ձայն է ստացել, ինչպես նաեւ՝ Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանը, որը մարզպետների ցանկի հետնամասում է՝ 188 ձայնով: Իսկ ամենաքիչ թվով ձայներ ստացել են Արարատի մարզպետ Սեդրակ Թեւոնյանը՝ 177, եւ Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը՝132:

Ընտրությունների արդյունքների այսպիսի պատկերը մի բան է ցույց տալիս, որ մարզպետներով պայմանավորվածության են եկել, գոնե մասնակի, որ մեկը մյուսի համար քարոզչություն է անելու կամ հրահանգելու է, բարեխոսելու է իր ղեկավարած մարզի տարածքայինների ղեկավարներին, որ գործընկեր մարզպետներին շատ ձայն տան, եւ նրանք ընտրական ցուցակի վերին հորիզոնականներում տեղ գտնեն՝ ապահովագրելով իրենց ապագա պաշտոնավարումը:

**Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ**
lusine.shahverdyan@hraparak.am

## ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄԸ ՀԱԿԱՎՐԱՑԱԿԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ ՍՏՈՐԱԳՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆ Է

Լարսի անցակետով ռուս-վրացական սահմանը հատող հայկական բեռնատարները, որոնք 12 օր մնացել էին սահմանին, երեկ տեղափոխվել են վրացական Գեզի մաքսային տերմինալ: Թե քանի օր նրանք կմնան այնտեղ, հայտնի չէ:

Հիշեցնենք. շինանյութով բարձված բեռնատարների մուտքը Հայաստան վրացական կողմն օրեր առաջ արգելել էր: Որեւէ համոզիչ բացատրություն չի տրվել, միայն ասել են՝ սպասեք:

Բեռնատարների վարորդները չեն կարողանում կապ հաստատել ո՛չ Վրաստանում Հայաստանի դեսպանատան հետ, ո՛չ ՀՀ որեւէ պաշտոնյայի: Նրանք զանգահարել են ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր **Գառնիկ Դանիելյանին**, խնդրել, որ բարձրաձայնի հարցը: «Ասել են՝ սպասեք, մենք ձեզ կասենք՝ երբ գնաք: Արհեստական խնդիրներ են ստեղծում»,- «Հրապարակի» հարցերին պատասխանելով՝ նշեց պատգամավորը: Ըստ նրա, այն, ինչ կատարվում է մեր բեռնատարների հետ Վրաստանում, քաղաքական ենթատեքստ ունի: «Վերջին շրջանում բավականին լարվել են հայ-վրացական հարաբերությունները՝ իշխանությունների անհեռատես հայտարարությունների պատճառով, եւ այդ առումով ես ենթադրում եմ, որ սա կապված է դրա հետ»,- ասում է Գառնիկ Դանիելյանը:

Հիշեցնենք. նոյեմբերին, Եվրանեսթի ԽՎ վերջին լիագումար նիստի շրջանակում, Երեւանում ընդունվեց բանաձեւ, որը ստորագրել էին նաեւ մեր պատգամավորները, եւ որով հոկտեմբերի 26-ին Վրաստանում կայացած խորհրդարանական ընտրությունները որակվել էին որպես «կեղծված», իսկ կառավարությունը՝ «ինքնահռչակ»: Ի պատասխան՝ վրացական պատվիրակությունը հայտարարել էր, որ հրաժարվում է մասնակցել Եվրանեսթի խորհրդարանական վեհաժողովի հետագա նիստերին:

«Ժամանակ առ ժամանակ այդ խնդիրները սահմանին առաջանում են, բայց մեր իշխանությունները մատը մատին չեն տալիս՝ դրանք լուծելու համար: Ներմուծողները, բեռնատարների վարորդները ՀՀ քաղաքացիներ են, նրանք պետք է այդ հարցերը կարողանան ուղղել պատկան մարմինների, բայց մարդկանց հետ կապ չեն հաստատում: Եվ իմ, եւ բեռնատարների վարորդների զանգերն անպատասխան են մնում: Էկոնոմիկայի նախարարությունը որեւէ ձեւով չի արձագանքում»,- ասում է պատգամավորը: Իսկ բեռնափոխադրողներից մեկը սոցցանցում գրել էր, որ փորձել է իր հարցի պատասխանը ստանալ նախարար Պապոյանից՝ իր էջում գրառում անելով, անմիջապես գրառումը ջնջել են, իրեն էլ՝ արգելափակել:

Նա բազմիցս ԱԺ ամբիոնից Վրաստանի սահմանի հետ կապված հարցերի մասին է խոսել՝ եւ ԱԺ ամբիոնից կառավարության անդամներին է դիմել, եւ էկոնոմիկայի նախարարությանը: «Գնում են պաշտոնական այցերի, բա ինչո՞ւ չեն այս հարցերը լուծում: Մի օր հեղուկ գազի բեռնատարներն են խնդիր ունենում, մի օր՝ շինանյութ, մի օր՝ գյուղմթերքով բեռնվածները, մի օր ծաղիկ արտահանողներն են խնդրի բախվում, մի օր՝ կոնյակ արտահանողները»,- հիշեցնում է նա:

Էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանի հրավերով, փետրվարի 20-ին Հայաստան էր ժամանել Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Մարիամ Կվրիվիշվիլու գլխավորած պատվիրակությունը: Պապոյանը խոսե՞լ է արդյոք տիկին Կվրիվիշվիլու հետ՝ շինանյութ ներմուծողների եւ, առհասարակ, Հայաստան մտնող եւ ելնող բեռների մասին, մենք չգիտենք: Տարածած հաղորդագրության մեջ ընդամենը նշվում է, որ «քննարկվել են առեւտրատնտեսական հարաբերությունների խորացման, բեռների անխոչընդոտ տարանցման, զբոսաշրջության ոլորտի զարգացման հարցեր»: Եթե անգամ խոսել են, պետք է ընդունել, որ արդյունքը զրո է եղել: Անգամ հարցին, թե որն է շինանյութով մեքենաների մուտքն արգելելու պատճառը, եւ քանի օր են դեռ մարդիկ՝ տնից-տեղից կտրված, անորոշության մեջ կանգնած մնալու պահեստում, նրանք պատասխանել չեն կարող:

**Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ**
syuzan.simonyan@hraparak.am

# ՈՒՇԱԴԻՐ ՀԵՏԵՎՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԱՅՑԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԻՆ

*«Հրապարակի» զրուցակիցն ադրբեջանական փորձագիտական խմբի համակարգող, Հարավային Կովկասի հետազոտական կենտրոնի տնօրեն **Ֆարհադ Մամեդովն** է:*

**- Հայ-ադրբեջանական հարաբերությունների ներկայիս վիճակը բնութագրում է 3 իրադարձություն. 2025-ին Վաշինգտոնում նախաստորագրված խաղաղության համաձայնագիրը, Ադրբեջանի տարածքով ՀՀ մատակարարվող նավթամթերքն ու ցորենը, քաղհասարակության ներկայացուցիչների փոխայցերը Երեւան եւ Բաքու: Դուք եւս մասնակցել եք դրանց: Ո՞րն է այդ այցերի գլխավոր նպատակը, ինչ արդյունք եք արձանագրել:**

- Աբու Դաբիում հուլիսի 10-ի հանդիպումը եւ դրան հաջորդած՝ Վաշինգտոնում 2025 թ. օգոստոսի 8-ի գագաթնաժողովը՝ նախագահ Թրամփի մասնակցությամբ, ինչպես նաեւ՝ Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարների կողմից համատեղ հռչակագրի ընդունումը՝ ԱՄՆ նախագահի մասնակցությամբ, հիմք դրեցին Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղության օրակարգին: Կողմերը փորձում են ստեղծել հարաբերությունների շրջանակ, որի հիմնական պայմանը միմյանց տարածքային ամբողջականության ճանաչումն է եւ բոլոր հարցերը քաղաքական եւ դիվանագիտական միջոցներով լուծելու հանձնառությունը: Ներկայում ընթանում է բարձր մակարդակի քաղաքական երկխոսություն, նախատեսվում է սկսել տարածաշրջանային TRIPP նախագծի իրականացումը, վերացվում են տնտեսական համագործակցության սահմանափակումները, իսկ երկխոսությունն իրականացվում է քաղհասարակության մակարդակով: Իմ կարծիքով, գլխավոր նպատակն է՝ ցույց տալ, որ նախկինում անհնար համարվող ամեն ինչ այժմ իրականացվում է: Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ համագործակցությունը կարող է ընդլայնվել եւ խորանալ հենց այս ուղղություններով՝ խաղաղության օրակարգի զարգացմանը զուգընթաց:

**- Սակայն թե՛ հայաստանյան եւ թե՛ ադրբեջանական հասարակության մեջ միմյանց նկատմամբ անվստահության մեծ չափաբաժին կա, որքան էլ պաշտոնական մակարդակով դրական ազդակներ հնչեն, եւ դա բնական է՝ հաշվի առնելով երկարատեւ հակամարտությունը: Իսկ ինչո՞ւ են Ադրբեջանի դպրոցական ծրագրերում, գրական գործերում շարունակում «թշնամի» համարել հայերին, Հայաստանը, եթե Ալիեւը խոսում է խաղաղության հաստատման մասին:**

- Յուրաքանչյուր հակամարտություն ունի իր հետեւանքները՝ մարդասիրական, տնտեսական եւ քաղաքական: Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հակամարտությունը լայնածավալ էր, եւ, համապատասխանաբար, հետեւանքները շատ ավելի խորն ու լայն են: Հետեւանքներից շատերն անշրջելի են: Էթնո-տարածքային հակամարտությունն ունի երկու չափում. այսօր կողմերը ճանաչել են միմյանց տարածքային ամբողջականությունը եւ, կարելի է ասել, համաձայնել են՝ հետեւողական քայլեր ձեռնարկել հակամարտության տարածքային մասի վերջնական լուծման ուղղությամբ: Սա ստեղծել է միջպետական փոխազդեցության եւ համագործակցության պայմաններ: Հակամարտության երկրորդ մասը հասարակությունների միջեւ խաղաղության հասնելն է: Սա բարդ խնդիր է, որը պահանջում է շատ ժամանակ, եւ այն կարելի է բաժանել ժամանակահատվածների: Այս ժամանակահատվածներից յուրաքանչյուրը ստեղծում է նոր հնարավորություններ եւ պայմաններ՝ հասարակությունների միջեւ հաշտեցման գործընթացում քայլեր իրականացնելու համար: Ներկայում իրականացվում են քայլեր, որոնք իրագործելի են՝ հաշվի առնելով խաղաղության օրակարգի ներկայիս համատեքստը: Որքան առաջ է շարժվում խաղաղության օրակարգը, այնքան ավելի կարող են առաջ մղվել անհատական խաղաղության թեմաները հասարակությունների ներսում: Սա վերաբերում է դպրոցական ուսումնական ծրագրերին, փոխադարձ մշակութային ժառանգությանը եւ շատ թեմաների, որոնք ներկայում զգայուն են հասարակությունների ընկալման մեջ: Այս ամենը կիրականացվի երկկողմանիորեն, քանի որ յուրաքանչյուր հասարակություն մշակել է սեփական սպասումները մյուսի նկատմամբ եւ իր ընկալումը խաղաղության օրակարգի պարամետրերի վերաբերյալ: Ադրբեջանական հասարակության համար կարեւոր է խաղաղության օրակարգի վերաբերյալ հայ հասարակության դիրքորոշումը, որը համաձայնեցվել է ներկայիս Հայաստանի կառավարության հետ: Այս մասին մենք կիմանանք ՀՀ-ում կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքներից: Սա խաղաղության գործընթացի կարեւոր շրջան է: Հաջորդ փուլը խաղաղության պայմանագրի ստորագրման եւ վավերացման մերձեցման քայլերն են: Ներկայում խաղաղության պարամետրերը ձեւավորվում են երկկողմանիորեն: Քաղաքացիական հասարակության մակարդակում մենք որոշում ենք այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն՝ խաղաղության նեղ ընկալումից լայն ընկալման անցնելու համար: Սա վերաբերում է նաեւ ձեր հարցում նշված թեմաներին:

**- Բաքուն պնդում է, որ խաղաղության պայմանագրի վերջնական կնքման համար Հայաստանը պետք է փոխի Սահմանադրությունը՝ նշելով, թե «դրանում տարածքային պահանջներ կան»: Երեւանը հերքում է դա, բայց խոսվում է մոտ ապագայում երկրի մայր օրենքը փոխելու մասին: Ըստ Ձեզ, սա կողմերի միջեւ միակ «վիճելի» կետն է, միայն սա՞ է խոչընդոտում վերջնական խաղաղության հաստատմանը:**

- Հայաստանում նոր սահմանադրության ընդունման վերաբերյալ հանրաքվեն ներքին գործընթաց է, որի արդյունքները կազդեն Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագրի ստորագրման եւ վավերացման վրա: Նոր սահմանադրության նախագիծը նախատեսվում է հրապարակել մարտին: Խորհրդարանական ընտրություններին մասնակցող հայկական քաղաքական ուժերը պետք է ձեւակերպեն իրենց դիրքորոշումը՝ առաջարկվող նախագծի վերաբերյալ: Հետաքրքիր կլինի նաեւ տեսնել, թե ինչպիսին է հաղթող քաղաքական ուժի դիրքորոշումը նոր սահմանադրության վերաբերյալ հանրաքվեի մասին՝ կառավարության ծրագրում: Սա, իր հերթին, մեզ կմոտեցնի խաղաղության գործընթացում անդառնալիության կետին՝ խաղաղության պայմանագրի ստորագրմանը եւ վավերացմանը: Ադրբեջանական հասարակության համար կարեւոր է իմանալ, թե ինչպես են ընտրություններին մասնակցող հայկական քաղաքական ուժերն իրենց ծրագրերում անդրադառնալու Ադրբեջանի հետ հարաբերություններին, ներկայիս խաղաղության օրակարգին, եւ ինչպես է քվեարկելու հայ հասարակությունը: Խաղաղության օրակարգի պարամետրերը հստակ են եւ ուրվագծված են նախորդ հարցերի պատասխաններում:

**- Հայաստանում էլ վերապահումներ կան. նախ, չեն հաշտվել Լեռնային Ղարաբաղի կորստի եւ հայաթափման հետ, ողջամիտ չեն համարում, այսպես կոչված, 300 հազար ադրբեջանցիների՝ Հայաստան վերադառնալու Բաքվի պահանջը, որը փաթեթավորվում է «Արեւմտյան Ադրբեջան» եզրով, սահմանազատման գործընթացի արձանագրած արդյունքները համարվում են միակողմանի զիջում, իսկ Բաքվում դատապարտված հայ գերիների ճակատագիրը վաղուց վեր է զուտ հայկական մտահոգությունից: Եվ այս ամենը խոսում է թշնամանքի ու հաշվեհարդարի մասին, նման պայմաններում խաղաղության մասին խոսելն ազնի՞վ է:**

- Այո, ազնիվ է: Ոչ մի հակամարտություն երբեք չի լուծել իր բոլոր հետեւանքները: Այսօր խաղաղության օրակարգը ճանաչել է այս իրականությունը, եւ Ադրբեջանի ու Հայաստանի կառավարությունները փորձում են դուրս գալ հակամարտության պարույրից եւ սահմանել փոխհարաբերությունների նոր շրջանակ: «Արեւմտյան Ադրբեջանի» եւ Հայկական ԽՍՀ-ում ապրող ադրբեջանցիների վերաբերյալ ես նշեմ, որ սա հակամարտության հետեւանքների մարդասիրական բաղադրիչի մի մասն է եւ Բաքվում քննարկվում է մարդու իրավունքների համատեքստում: Նմանապես, Հայաստանը եւ որոշ եվրոպական երկրներ անդրադառնում են Ադրբեջանի տարածքը լքած հայերի հարցին: Այնուամենայնիվ, եւ Ադրբեջանում, եւ Հայաստանում մարդու իրավունքների համատեքստը լրացվում է տարածքային համատեքստով՝ տարածքային ամբողջականությանը սպառնացող ենթադրյալ սպառնալիքով: Արեւմտյան ադրբեջանցիների հարցը կբարձրացվի նույն համատեքստում, ինչ որ բարձրացվում է Ադրբեջանից դուրս եկած հայերի հարցը: Ընտրությունը մնում է նրանց, ովքեր բարձրացնում են հարցը՝ իրենց ընտրած համատեքստերում: Ադրբեջանական հասարակությունը չի ընդունում ընտրողական մոտեցումը: Ադրբեջանում բանտարկված հայ քաղաքացիների վերաբերյալ կարող եմ ասել, որ դատավարություններն ավարտվել են, եւ ադրբեջանական հասարակության համար սա հաստատված իրականության մի մասն է: Միակ երկիրը, որն ունի լեգիտիմություն՝ բարձրացնելու արտասահմանում դատապարտված հայ քաղաքացիների հարցը, Հայաստանի Հանրապետությունն է: Սահմանների սահմանազատման հարցի վերաբերյալ կարող եմ ասել, որ մեր երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում գործում է միջկառավարական հանձնաժողով, եւ կա պարտավորություն՝ բոլոր հարցերը լուծել քաղաքական եւ դիվանագիտական միջոցներով: Արդյունքներ արդեն ձեռք են բերվել. սահմանի մի փոքր հատված սահմանազատվել եւ սահմանագծվել է, ինչը հիմք է հանդիսացել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար՝ այս հատվածն օգտագործելու սահմանը հատելու համար:

**- Առաջին դեպքը չէ, երբ ադրբեջանցիներն ազատ ելումուտ են անում Հայաստանում, խոսքը որեւէ պատվիրակության մասին չէ: Օրերս ձեր երկու հայրենակից իրենց ավտոմեքենայով եկել էին մեր երկիր, ազատ տեղաշարժվում էին, զրուցում ոստիկանների հետ, տեսանյութեր հրապարակում ադրբեջաներենով՝ հայկական բնակավայրերը ներկայացնելով ձեր տերմիններով: Կնշե՞ք մեկ օրինակ, երբ հայերն այդպես անվտանգ ելումուտ են արել Ադրբեջանում:**

- Հայաստանի Ազգային անվտանգության ծառայության պաշտոնական հաղորդագրության մեջ նշված էր ադրբեջանական ծագումով երկու ռուս քաղաքացիների՝ Հայաստանում գտնվելու ժամանակահատվածը, ինչպես նաեւ՝ նրանց ճշգրիտ ճանապարհորդության ժամանակացույցը: Սա շատ բան է ասում: Մենք նաեւ ուշադիր հետեւում ենք այս այցի վերաբերյալ հայ հասարակության արձագանքներին: Հայերն Ադրբեջան են այցելել միջազգային միջոցառումների շրջանակներում: Հայերի եւ ադրբեջանցիների կողմից Ադրբեջան եւ Հայաստան ազատ փոխայցերը խաղաղության գործընթացի անբաժանելի մասն են կազմում: Տեսնենք, թե խաղաղության գործընթացի որ փուլում նման այցելությունները չեն դառնա արտառոց եւ չեն գրավի այդքան մեծ ուշադրություն:

**- Հայաստանում նախընտրական շրջան է. հանրությունը համոզված է, որ, Արեւմուտքից բացի, Փաշինյանը թուրք-ադրբեջանական տանդեմի նախընտրելի թեկնածուն է: Ադրբեջանական մամուլը նրա մասին ավելի մեծ հարգանքով է խոսում, քան, օրինակ, ձեր երկրի ռազմավարական դաշնակից՝ Ռուսաստանի նախագահ Պուտինը: Ենթադրվում է, որ Հայաստանի գործող վարչապետը կատարում է Ադրբեջանի բոլոր պահանջները: Եթե դուք վստահ եք ձեր գերազանցության մեջ, ինչո՞ւ եք խաղաղությունը կապում մի մարդու հետ, որի վարկանիշը նվազում է նույնիսկ սեփական երկրում:**

- Թույլ տվեք ուղղում անել: Ադրբեջանն ունի դաշնակցային փոխգործակցության հռչակագիր Ռուսաստանի հետ: Հայաստանը Ռուսաստանի լիիրավ դաշնակիցն է՝ թե՛ երկկողմանի, թե՛ ռազմաքաղաքական եւ տնտեսական ինտեգրման միջոցով: Ըստ էության, ես նշում եմ, որ Նիկոլ Փաշինյանը Հայաստանի օրինական վարչապետն է, որն անցյալ օգոստոսին համաձայնեցրել է խաղաղության օրակարգն Ադրբեջանի նախագահի հետ: Վաշինգտոնի գագաթնաժողովից ի վեր մենք Հայաստանում որեւէ խոշոր բողոքի ցույց չենք տեսել: Շատ ընդդիմադիր ուժեր քննադատել են Հայաստանի կառավարությանը, բայց դա չի վերածել լայնածավալ բողոքի ցույցերի: Քաղաքական ուժերի վարկանիշը որոշվում է ընտրություններով, եւ մենք ունենք ընդամենը մի քանի ամիս՝ սպասելու:

**- Արդարացի՞ է, ըստ Ձեզ, որ 44-օրյա պատերազմը փաստացի կանգնեցրեց Պուտինը՝ նոյեմբերի 9-ի հայտնի եռակողմ համա-**

**Արա ԱԼՈՅԱՆ**

ՀԵՏԻՆ

# ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԱՐՏԸ ԿՕԳՆԻ ԿԱՆԳՆԵՑՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՈՒՐՔԱՀՊԱՏԱԿԵՑՈՒՄԸ

Փետրվարի 24-ին ռուս-ուկրաինական պատերազմի 4-րդ տարին է. 2022 թ. փետրվարի 24-ին Ռուսաստանի Դաշնության զինված ուժերն անցան Ուկրաինայի սահմանը, այդ թվում եւ Բելառուսի կողմից, եւ սկսեցին գրավել ուկրաինական քաղաքներն ու գյուղերը: Ռուսաստանի նախագահը հայտարարեց, որ սկսում են հատուկ ռազմական գործողություն, որի նպատակն Ուկրաինայի ապաազգայնականացումն ու ապառազմականացումն է: Ենթադրվում էր, որ գործողությունը պետք է ավարտվեր շատ արագ՝ մայրաքաղաք Կիեւի գրավմամբ եւ այնտեղ պրոռուսական իշխանություն հաստատելով: Ռուսական բանակը գրավեց Կիեւի մի քանի մերձակա քաղաքներ, բայց ուկրաինական բանակը եւ ժողովուրդը ռուսներին չընդունեցին իբրեւ ազատարարների, եւ սկսվեց երկարատեւ ու փոխադարձ մաշող պատերազմը: Արեւմտյան երկրները՝ ԱՄՆ-ն, ԵՄ-ն, նրանց դաշնակիցները հարյուր միլիարդավոր դոլարների օգնություն հատկացրին Ուկրաինային՝ զենքի, զինամթերքի եւ ուղղակի ֆինանսական աջակցության տեսքով, առանց որի Ուկրաինան չէր դիմանա իրենից անհամեմատ ավելի մեծ մարդկային եւ ռազմական ներուժ ունեցող Ռուսաստանին:

Երեւի ոչ մի պատերազմի ժամանակ այդքան չի խոսվել խաղաղության եւ պատերազմը դադարեցնելու մասին, որքան ռուս-ուկրաինականի ժամանակ: Պատերազմից ընդամենը մեկ ամիս հետո Ստամբուլում սկսվեցին առաջին բանակցությունները, կողմերը շատ մոտ էին խաղաղության պայմանագրի ստորագրմանը, սակայն, ինչպես հետո պարզվեց, արեւմտյան երկրները, այդ թվում՝ Մեծ Բրիտանիան, ի դեմս այն ժամանակվա վարչապետ Բորիս Ջոնսոնի, կտրականապես արգելել էին որեւէ փաստաթուղթ ստորագրել՝ պնդելով, որ պատերազմը պետք է շարունակվի մինչեւ հաղթական ավարտ եւ Ուկրաինայի բոլոր գրավված տարածքների ազատագրում: Խաղաղության բանակցությունները շարունակվում են մինչ օրս, քանի որ պատերազմը շարունակելու կողմնակիցներն ավելի շատ ու ազդեցիկ են խաղաղության կողմնակիցներից: Պատերազմը դարձել է յուրօրինակ բիզնես՝ ինչպես արեւմտյան երկրների, այնպես էլ ուկրաինական վերնախավի համար: Նման բազմաթիվ գործարքներ բացահայտվեցին, այդ թվում նույն՝ Բորիս Ջոնսոնի մասնակցությամբ, Ուկրաինայի նախագահի մերձավոր օլիգարխ Մինդիչը երկրից փախավ՝ միլիոնավոր դոլարների յուրացման մեղադրանքով, բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ կալանավորվեցին կամ փախան երկրից: Նույնը՝ Ռուսաստանում. բանակի բազմաթիվ բարձրաստիճան գեներալներ, քաղաքացիական պաշտոնյաներ մեղադրվեցին պատերազմի վրա միլիարդներ աշխատելու մեջ:

Թվում է, թե ուկրաինացի ժողովուրդը հերոսաբար դիմադրում է ռուսական ագրեսիային եւ չի համակերպվում իր երկրի եւ տարածքի կորստի հետ: Բայց ո՞ւմ համար են այդ զոհողությունները, եթե, շատերի կարծիքով, հարցականի տակ է ուկրաինացի ժողովրդի գոյությունը, երկիրը դատարկվել է եւ շարունակում է դատարկվել, ծնելիությունը 3-4 անգամ պակաս է մահերից: Ընդամենը 10 տարվա ընթացքում 45 միլիոնանոց Ուկրաինայից մնացել է, պաշտոնական վիճակագրությամբ՝ 28, իսկ ոչ պաշտոնականով՝ 18-20 միլիոն մարդ, այն էլ՝ հիմնականում ծերեր, թոշակառուներ, հաշմանդամներ: Երիտասարդ, գործունյա մասն արտագաղթել է ԱՄՆ, ԵՄ, Կանադա, այլ ապահով երկրներ: Ուկրաինայի տնտեսությունը ոչնչացված է, էներգետիկան, արդյունաբերական ձեռնարկությունները, ենթակառուցվածքներն ամեն օր ենթարկվում են հրթիռային հարձակումների, երկիրը հայտնվել է էներգետիկ ճգնաժամի մեջ: Ո՞վ պետք է վերականգնի Ուկրաինան, երբ մարդիկ անվերադարձ հեռացել են, իսկ վերականգնման համար կպահանջվեն հարյուր միլիարդավոր կամ ավելի մեծ միջոցներ: Ուկրաինան եւ նրա հասարակությունը պատանդ են դարձել արեւմտյան երկրների ձեռքին, որոնք, իրենց շահերից ելնելով, պահանջում են շարունակել պատերազմը: Դա շատ նման է այն գլադիատորական մարտերին, երբ հանդիսատեսը պահանջում էր, որ վիրավոր եւ արնաքամ լինող մարտիկը կրկին ոտքի կանգնի եւ շարունակի կռվել, որովհետեւ ինքը փող է տվել՝ այդ մենամարտը դիտելու համար, եւ խաղադրույք է արել նրա հաղթանակի վրա:

Ռուսաստանը եւս կորուստներ է ունենում թե՛ մարդկային եւ թե՛ տնտեսական առումով, միլիոնավոր մարդիկ իրենց վրա զգում են պատերազմի արհավիրքը, հարյուր հազարավոր զոհերն ու հաշմանդամները, անընդհատ ռմբակոծության տակ ապրելու վախը, միլիարդավոր դոլարների ֆինանսական կորուստները, որոնք կարող էին ուղղվել երկրի շենացմանը եւ մարդկանց բարեկեցության բարձրացմանը, ուղղվում են պատերազմին կամ դրա հետեւանքների վերացմանը: Բայց պատերազմն Ուկրաինայի տարածքում է, Ուկրաինան է կորցրել իր տարածքի 20 տոկոսի վերահսկողությունը, եւ այդ առումով հավասարության նշան դնել չարժե:

Ուկրաինան հավատաց ԱՄՆ-ի, ԵՄ-ի խոստումներին, թե իրենք ամեն ինչով կօգնեն, թույլ չեն տա Ռուսաստանին՝ հասնել հաղթանակի, Ուկրաինան հավատաց, որ արեւմտյան դաշնակիցների երաշխիքները եւ օգնությունը բավարար կլինեն, որ պարտության մատնեն Ռուսաստանին: Հիմա արդեն, երբ հաղթանակի հույսը գնալով ավելի ու ավելի անիրատեսական է դառնում, միեւնույն է՝ դա չի մոտեցնում խաղաղությունը, քանի որ Ուկրաինայի իշխանությունը եւս շահագրգռված չէ խաղաղության պայմանագիր կնքելով, մինչեւ կողմերից մեկի վերջնական պարտությունը եւ ջախջախումը:

Ռուս-ուկրաինական պատերազմն իր ազդեցությունն ունեցավ նաեւ Հայաստանի վրա: Փաշինյանի ռեժիմը, թվացյալ չեզոքություն դրսեւորելով, իրականում խաղադրույք արեց Ուկրաինայի հաղթանակի վրա. նախ՝ սառեցրեց հարաբերությունները ՀԱՊԿ-ի հետ, հումանիտար աջակցություն ուղարկեց Ուկրաինա եւ պատերազմն օգտագործեց Հայաստանը ռուսական ազդեցությունից Թուրքիայի եւ Ադրբեջանի ազդեցության գոտի տեղափոխելու համար: Փաշինյանը հասկանում է, որ պատերազմի մեջ գտնվող Ռուսաստանը բավարար ռեսուրս չունի՝ հակադրվելու Թուրքիային եւ Ադրբեջանին, որոնց հետ հարաբերությունները փչացնելու ո՛չ ցանկություն կա, ո՛չ հնարավորություն: Այն տեսակետը, թե Հայաստանը ռուսական ազդեցությունը փոխարինում է եվրոպականով, ոչ միայն սխալ է, այլեւ՝ բացարձակ խաբեություն: 2 օր առաջ ԱՄՆ նախագահի կազմակերպած խաղաղության խորհրդի հավաքին ոչ մի ազդեցիկ եվրոպական երկիր ներկա չէր՝ ո՛չ Ֆրանսիան, ո՛չ Գերմանիան եւ ո՛չ էլ, ասենք, Սլովակիան կամ Չեխիան: Իսկ Հայաստանը ներկա էր, ո՞վ էր տարել Հայաստանին այդ հավաքին, ո՞վ էր բռնել Փաշինյանի թաթիկից, իհարկե՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի նախագահներ Էրդողանն ու Իլհամ Ալիեւը:

Շատերը Հայաստանում ասում են, որ ռուս-ուկրաինական պատերազմի ավարտը վտանգավոր կլինի մեզ համար, քանի որ Ռուսաստանը կկարողանա անդրադառնալ Հարավային Կովկասին եւ, մասնավորապես, Հայաստանին: Նման պնդում անողները թուրքական ազդեցության բացահայտված գործակալներ են, որոնք, գործելով իշխանության հետ համատեղ, Հայաստանը տանում են թուրքացման ճանապարհով եւ ռուսական հակազդեցությունն իսկապես համարում են սպառնալիք: Ռուս-ուկրաինական պատերազմի ավարտը թույլ կտա կանգնեցնել Հայաստանի թուրքացման, եթե ուզում եք՝ ավելի կատեգորիկ՝ Հայաստանի ոչնչացման քաղաքականությունը, Հայաստանի թուրքահպատակեցման վերջնարդյունքը Հայաստանի ոչնչացումն է: Այլ հեռանկար ուղղակի չկա:

**Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ**

---

**ձայնագրով, իսկ հակամարտության խաղաղ կարգավորման «փառքն ու դափնին» իրեն է վերագրում Թրամփը՝ Երեւանից ու Բաքվից իբրեւ երախտիք արժանանալով TRIPP նախագծի անվանակոչմանը:**

- 44-օրյա պատերազմն ավարտվեց, երբ իրականացավ Ադրբեջանի նախագահի կողմից պատերազմի առաջին օրը հայտարարված նպատակը: Դա հայկական զինված ուժերի դուրսբերումն էր Ադրբեջանի տարածքից: Համաձայնագրերի արդյունքում Ռուսաստանին տրվեց բացառիկ իրավունք՝ Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հարաբերություններում. ստեղծվեց եռակողմ ձեւաչափ. Ռուսաստանի զինված ուժերը մտան Ղարաբաղ եւ մասնակցեցին Բաքվի եւ Ղարաբաղի հայերի միջեւ շփումներին: ՌԴ-ն պետք է 5 տարի ժամկետով ստանձներ Հայաստանից Ղարաբաղ տանող ճանապարհի եւ Ադրբեջանի ցամաքային հատվածից դեպի մեզ պատկանող Նախիջեւանի Ինքնավար Հանրապետություն հաղորդակցությունների վերահսկողությունը Հայաստանի տարածքով: Թուրքիայի նախագահի եւ Հայաստանի վարչապետի հատուկ ներկայացուցիչների առաջին հանդիպումը տեղի ունեցավ ՌԴ ԱԳՆ շենքում: Սակայն մանիպուլյատիվ մոտեցման պատճառով Մոսկվան կորցրեց իր բոլոր գործառույթները նշված տարածքներում: Նույնը տեղի ունեցավ նաեւ ԵՄ միջնորդության հետ: Այսօր ստեղծվել է երկկողմ ձեւաչափ, որի շրջանակներում Միացյալ Նահանգները՝ նախագահ Թրամփի գլխավորությամբ, դեր է խաղում հաղորդակցությունների ապաշրջափակման ավելի լայն հարցին վերաբերող միասնական նախագծում, եւ այս ոլորտն իր հերթին Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ փոխգործակցության բազմաթիվ ոլորտներից մեկն է: ԱՄՆ-ի մասնակցությունը TRIPP նախագծում՝ Հայաստանի ինքնիշխան որոշումն է, եւ Ադրբեջանը նույնպես իր ինքնիշխան համաձայնությունն է տվել նորաստեղծ հայ-ամերիկյան ընկերության հետ համագործակցելու համար: Հետեւաբար, եթե ԱՄՆ-ի մասնակցությունը TRIPP նախագծում Ադրբեջանի եւ Հայաստանի կառավարությունների ինքնիշխան որոշումն է, ապա տրանսպորտային երթուղին նախագահ Թրամփի անունով կոչելը լռելյայն արդարացված է:

**- Դուք անձամբ հավատո՞ւմ եք հայ-ադրբեջանական հաշտությանը, բարեկամության հարցը թողնենք ապագային:**

- Եթե ես չհավատայի դրան, չէի մասնակցի Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ քաղաքացիական հասարակության երկխոսությանը: Այս գործընթացի բանալին իրատեսական մոտեցումն է: Այսօր կան հնարավորություններ՝ հաշտեցման գործընթաց սկսելու համար: Իհարկե, քաղաքական երկխոսության եւ տնտեսական համագործակցության մակարդակում արդյունքներն ավելի շուտ կզգացվեն եւ կարող են չափվել. դրանք, այսպես ասած, շոշափելի են: Հասարակական մակարդակում աշխատանքը պահանջում է ժամանակ, համբերություն, մասնակիցների կողմից համառություն, հետեւողականություն եւ ուշադիր պլանավորում: Խաղաղության գործընթացի յուրաքանչյուր նոր փուլ կցուցադրի խաղաղության նկատմամբ նոր նախասիրություններ, որոնք կստեղծեն խաղաղության հաստատման բովանդակությունն ու հիմքերը հասարակությունների ընկալման մեջ:

*Սկիզբը՝ էջ 4*

ՍՓՅՈՒՌՔ

Հարցազրույց «Սփյուռք» շաբաթաթերթի խմբագիր **Սագո Օգնայանի** հետ

«ՀՀ-ն շրջապատված է երկու ոչ բարեկամ պետությունների կողմից, միշտ կարող է ենթարկվել հարձակումների՝ հայրենիքի հողը խլելու նպատակով: Միշտ պետք է պատրաստ լինենք ինքնապաշտպանվելու: Ինքնախաբեություններ, ցուցադրություններ, մեծամոլություն, զգացականություններ պետք է թողնենք եւ



# ԳՈՐԾ ՈՒՆԵՆՔ ՊԵՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԼՈՒՐՋ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԵՏ

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

միասին ծանր աշխատանք կատարենք, հատկապես՝ պետական մակարդակով՝ պաշտպանելու ներկայիս եղած Հայաստանը: Ուժն է, որ հարգանք է պարտադրում շրջակայքին եւ բոլորին»,- ասում է արտերկրում հայտնի «Սփյուռք» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Սարգիս Օգնայանը: Նրան մի քանի հարց ուղղեցինք:

**- Ընթերցողի համար հետաքրքիր կլինի իմանալ, թե ինչպես հիմնվեց «Սփյուռք» շաբաթաթերթը, ինչպես է այն գոյատեւել, ինչ խնդիրներ ու նպատակներ ունի այսօր, ինչպես է ապահովվում պարբերականությունը:**

- «Սփյուռք» գրական, գեղարվեստական, հասարակական հանդեսը հայկական իրականության բացառիկ երեւույթներից է: Այն հիմնադրված է 1958-ին՝ հայ հրապարակախոս եւ բանաստեղծ Սիմոն Սիմոնյանի կողմից: Թերթը սկզբունքապես անկախ էր, քաղաքական կուսակցությունների հետ կապ չուներ: Հոն ճշմարտությունը պիտի ասվեր, նույնիսկ եթե անկայուն ըլլար շատերուն համար: Իմ քաջալերանքով շատ գրողներ եւ բանաստեղծներ սկսան համագործակցել՝ ինչպես Հովհաննես Շիրազ, Սիլվա Կապուտիկյան, Գեւորգ Գուբելյան: 1975-1989 թվականներին խմբագրեց Գեւորգ Աճեմյանը՝ պահպանելով գրական եւ մշակութային ուղղվածությունը: 1990-ին թերթը փոխանցվեցավ Լիբանանի Հայկական Ժողովրդային Շարժմանը (ՀԺՇ), եւ թերթի ընդհանուր ուղղվածությունը զգալիորեն փոխվեցավ՝ ազգային ազատագրական շարժումների եւ Հայոց ցեղասպանության թեմաներով: Ներկայիս «Սփյուռք»-ը պատկերազարդ անկախ հրատարակություն է, որում գտնում են հայ ազգային ցավերու շուրջ մեկնաբանություններ եւ վերլուծություններ՝ հայաստանցի եւ սփյուռքահայ ընթերցողների համար: Թերթը գոյատեւում է դժվար պայմաններում՝ հայերեն կարդացողներու պակասի, աշխատակիցների քչության եւ նյութական դժվարությունների պատճառով: Ներքին տեղեկատվական մամուլից զերծ է, բայց շարունակում է հանդիսանալ ազգային-հասարակական լուրջ պարբերական: Վերջին 10 տարիներին հրատարակել ենք նաեւ գրքեր, այդ թվում՝ ՀԱՀԳԲ-ի ալբոմ-հուշամատյան (2025) եւ այլ լիբանանահայ եւ սփյուռքահայ հեղինակների աշխատանքներ:

**- Ներկայիս ներհայաստանյան զարգացումները խոր մտահոգություն են պատճառում սփյուռքի որոշ շրջանակներին: Ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի Հանրապետության ներքաղաքական իրավիճակը, գործող իշխանության վարքագիծը, ազգային ինքնության եւ Եկեղեցու շուրջ ընթացող գործընթացները:**

- Որքան ալ փորձենք ամենամեղմ ձեւակերպումներով անդրադառնալ Հայաստանի Հանրապետության գործող վարչապետ Նիկոլ Փաշինյանի գրեթե հանապազօրյա ելույթներին ու դիրքորոշումներին, դժվար է չարձանագրել, որ գործ ունենք պետական մտածողության լուրջ ճգնաժամի հետ:

Պետական գործիչը պարտավոր է առաջնորդվել իրատեսությամբ, տրամաբանությամբ, շրջահայացությամբ եւ պատասխանատվության զգացումով: Սակայն հնչեցված շարք մը արտահայտություններ, մասնավորաբար՝ «կառավարությունը ես եմ» ձեւակերպումը, կհուշեն իշխանության անհատականացման եւ կառավարման կոլեգիալ սկզբունքների խախտման մասին: Կառավարությունը մեկ անձի քաղաքական ինքնության շարունակությունը չէ, այլ՝ հավաքական պատասխանատվություն կրող մարմին: Երբ պետությունը կնույնացվի մեկ անձի հետ, այդ իրողությունն արդեն իսկ մտահոգիչ է: Սակայն խնդիրը միայն կառավարման ոճին չի վերաբերի: Ավելի խոր գործընթաց մը կծավալի ազգային ինքնության հիմքերին շուրջ: Այսօր ակնհայտ է, որ թիրախ դարձած է մեր ազգային գոյության առանցքային հիմնասյուներեն մեկը՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին: Եկեղեցին լոկ կրոնական կառույց չէ. այն մեր պատմական հիշողության, մշակութային շարունակականության, ազգային ինքնագիտակցության եւ համազգային միասնության կարեւոր սյուներեն է: Երբ իշխանությունը հետեւողական կերպով կվարկաբեկի Եկեղեցին եւ անոր հոգեւոր դասը, դժվար է զայն ներկայացնել իբրեւ պարզ բարեփոխման գործընթաց: Անշուշտ, Հայոց եկեղեցին եւս, որպես մարդկային կառույց, ունի իր ներքին խնդիրները, որոնք պետք է դիմագրավվեն ու սրբագրվեն: Սակայն խնդիրների լուծումը եւ կառույցի հեղինակազրկումը կամ քանդումը տարբեր բաներ են: Այս պարագային ավելի շատ կնկատվի ապամոնտաժման, քան պայծառացման միտում: Մյուս լրջագույն հարցը կվերաբերի պետական ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության շուրջ զարգացումներին: Այսպես կոչված՝ «Զանգեզուրի միջանցք»-ի հարցով տեղի ունեցած գործընթացները, միջազգային դերակատարների հայտարարությունները, ինչպես նաեւ՝ Արցախի կորստեն եւ արցախահայության բռնագաղթեն ետք հնչեցված գնահատականները խոր մտահոգություն կպատճառեն: Երբ կհնչի այն տեսակետը, թե Արցախի զոհաբերումը իբր թե նպատակ ուներ՝ ապահովելու Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը, բնականաբար, կծագին ծանր հարցադրումներ պետական ռազմավարական մտածողության վերաբերյալ: Պետականության ամրապնդումը չի կրնար կառուցվիլ ազգային իրավունքներու եւ պատմական պատասխանատվության հաշվին:

Գործող իշխանությունն իր քաղաքական օրակարգը կներկայացնե ժողովրդավարության, ազատության եւ մարդու իրավունքների պաշտպանության կարգախոսներով: Սակայն ժողովրդավարությունը չի նշանակեր ազգային ինքնության նսեմացում: Ազատությունը չի կրնար վերածվիլ պատմական հիշողության աղավաղման: Իրավունքների պաշտպանությունը չի կրնար ընթանալ ազգային խորհրդանիշների արժեզրկման ուղիով: Առավել զարմացնող է հանրային այն շրջանակների համառ հանդուրժողականությունը, որոնք տակավին կշարունակեն հույս փայփայել եւ տեղի ունեցող գործընթացները չտեսնելու տալ: Երկար ժամանակ լայն զանգվածները ենթարկված էին ապատեղեկատվության եւ քարոզչական մեքենայության ազդեցության, սակայն այսօր իրողությունները չափազանց տեսանելի են:

Մենք կապրինք մեր նորագույն պատմության վճռորոշ հանգրվան մը: Խնդիրը լոկ իշխանափոխությունը չէ, այլ՝ պետական եւ ազգային ուղղության վերարժեւորումը: Եթե մեզ համար տակավին արժեք կներկայացնեն հայ ինքնությունը, պետական ինքնիշխանությունը, ազգային-գաղափարական հիմքի անխաթար պահպանումը եւ մեր հոգեւոր ժառանգության շարունակականությունը, ապա անհրաժեշտ է խոր վերահիմաստավորում եւ պատասխանատու քաղաքական փոփոխություն: Վաղը կրնա ուշ ըլլալ:

# ՈՐՈՆՔ ԵՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Անցյալ շաբաթ՝ փետրվարի 17-ին եւ 18-ին, Վրաստանի նախագահն ու վարչապետը ելույթներով հանդես եկան խորհրդարանում: Ֆորմալ առումով, նախագահի ելույթին կարելի է չանդրադառնալ, քանի որ նա ավելի շատ ունի ներկայացուցչական եւ սիմվոլիկ արժեք, քան ռեալ իշխանության կրող է: Շատ ավելի կարեւոր է վարչապետի ելույթը: Նախագահ Կավելաշվիլին ընդհանուր գծերով ներկայացրել է արտաքին քաղաքականության ոլորտում իր երկրի կեցվածքը: Նրա խոսքի հիմնական ուղերձները վերաբերում էին արտաքին ուժերին, որոնք փորձում են ապակայունացնել իրավիճակը Վրաստանում: Նա ուղղակի արձանագրել է ԵՄ ապակայունացնող դերակատարումը ներվրացական կյանքում եւ Բրյուսելից պահանջել է համակերպվել այն բանի հետ, որ Վրաստանն անկախ քաղաքականություն է վարում: Սակայն, սրանով հանդերձ, կոչ չի արել՝ շրջադարձ կատարել դեպի հյուսիս, այլ ընդգծել է, որ Վրաստանի համար շարունակում է առաջնային մնալ բազմավեկտոր ու պրագմատիկ քաղաքականությունը: Միացյալ Նահանգների առումով էլ Կավելաշվիլին հանդես է եկել գործընկերային հարաբերությունները վերականգնելու հորդորով:

Վարչապետ Կոբախիձեն կենտրոնացել է միգրացիոն խնդիրների վրա: Նա թեեւ արձանագրել էր, որ Վրաստանը տուրիստական երկիր է, սակայն ներկայացրել է դրա բացասական կողմերը՝ նկատելով, որ դա մի շարք խնդիրներ է ստեղծում, ինչպիսին անօրինական միգրացիան է: Կոբախիձեն ասել է, որ նման իրավիճակներում դժվար է միգրացիոն հոսքերի կառավարումը: Նա անդրադարձել է նաեւ ռուսական գործոնին եւ ասել, որ ներկայում ՌԴ 32 քաղաքացի Վրաստանում կեցության իրավունք է ստացել, ինչը կազմում է օտարերկրացիների ընդհանուր թվի 1/3-ը: Խոսել է նաեւ օտարերկրացիների՝ հակակառավարական գործողություններին ներգրավվածության մասին: Կոբախիձեն ասել է, որ մի շարք մասնագիտություններով աշխատելու հարցում պետք է սահմանափակումներ կիրառվեն միգրանտների համար: Կոբախիձեն շեշտել է, որ Վրաստանում կեցության իրավունք ստացած ՌԴ քաղաքացիների մեծ մասն ունի վրացական արմատներ: Սրանով նա հակադարձել է ընդդիմությանը, որը բարձրաձայնում է անընդհատ Վրաստանում ռուսական գործոնի ամրապնդման եւ Վրաստանի ռուսականացման մասին: Ըստ էության, այդ ելույթներով արձանագրվել է, որ բազմավեկտորայնությունն ու պրագմատիզմը շարունակում են մնալ Վրաստանի համար որպես քաղաքական առաջնահերթ ուղենիշներ՝ նկատում է Սերգեյ Մարկեդոնովը:

# Ինչ վիճակ է տիրում ռուսական կինոյում

Ռուսական կինոն եւ հատկապես կինովարձույթը վերջին տարիներին ունեն երկու մակարդակ. առաջինում պաշտոնապես գրաքննություն անցած եւ ցուցադրության թույլատրված կինոնկարներն են, երկրորդում՝ ոչ պաշտոնական կամ «պիրատային» ֆիլմերը: Նոր տարվա եւ սուրբծննդյան արձակուրդների ժամանակ, որոնք Ռուսաստանում բավականին երկար են տեւում, մոտ 10 օր կինովարձույթում գերիշխում են ռուսական կինոնկարները: Ընդ որում՝ «Չեբուրաշկա 2»-ը կինովարձույթի ռեկորդ է սահմանել: Արձակուրդներից հետո էլ դա շարունակվում է: Այս շաբաթ «Չեբուրաշկա 2»-ի կինովարձույթի հասույթը հասել է ռուսական իրականության համար ռեկորդային՝ 6 միլիարդ ռուբլու՝ գրում է մեկնաբան Ալեքսեյ Մակարկինը:

Սակայն ռեկորդակիր կինոնկարի ոչ բավարար գաղափարական հենք ունենալու հետ կապված՝ քննադատություններ են հնչում: Չնայած գուցե այդ ոչ բավարար գաղափարական հենքն ու թեթեւությունն են, որ մարդկանց գրավում են: Չէ՞ որ հիմա բոլորը հոգնել են քաղաքականացվածությունից: Երեւույթը, ի դեպ, նոր չէ: Ժամանակին ֆրանսիական կինոկատակերգությունները, որոնք ցուցադրվում էին խորհրդային էկրաններին, քննադատվում էին այն բանի համար, որ բացակայում էին իրական սոցիալականությունն ու դասակարգային գիտակցությունը: Վերջին շրջանի կինովարձութային հասույթների ամփոփումից երեւում է, որ մարդիկ հետաքրքրված են «պիրատային» «Ավատար. կրակ եւ մոխիր» կինոնկարով, որի հասույթը կազմել է 1,2 միլիարդ ռուբլի, ինչպես նաեւ՝ ռուսական «Սպասուհին» ժապավենով, որը հավաքել է մոտ 1,2 միլիարդ ռուբլու հասույթ:

Վերջին շաբաթներին հատկապես մեծ է եղել Սարիկ Անդրեասյանի «Սալթան թագավորի հեքիաթները» ֆիլմի հասույթը: Հայազգի այս ռեժիսորի կինոնկարները քննադատելը Ռուսաստանում «լավ տոնի նշան» է համարվում, սակայն կինոդիտողը սիրում է նրա կինոնկարները, ու հատկապես այս վերջին ժապավենը մեծ պահանջարկ ունի: Ու պարզ չէ, թե դրանում որքան է Անդրեասյանի, որքան՝ Պուշկինի ներդրումը: 4 օրում կինոնկարը հավաքել է 670 միլիոն ռուբլի: Կա կանխատեսում, որ այն կգերազանցի 1 միլիարդ ռուբլու սահմանը: Իսկ, ահա, «Զախլիկը» կինոժապավենը, որը 842 միլիոն ռուբլի բյուջե ուներ, որից 225 միլիոնը պետական անվերադարձ սուբսիդիա է, կարողացել է հավաքել միայն 285 միլիոն ռուբլի, եւ կարծես թե կինովարձույթում հաջողության հասնելու շանսերն արդեն մարում են:

**Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Մայր տաճար

*Նվիրում եմ Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին*

Քրիստոս Աստված՝ Արեգակ արդար,
Պայծառակերպվիր դարձյալ ու կրկին,
Իջիր մեզ վրա քո լույսով վարար
Եվ սիրով ծածկիր տաճար ու բագին:
Ուժ տուր պահպանենք խաչդ անբասիր,
Մեզ՝ քո անունով հին խաչվածներին:
Մոլորվել ենք, Տեր, օգնության հասիր,
Վտարենք մեզնից մեր ներսի չարին:
Հին աստվածները հեռացան մեկ-մեկ,
Ճամփա բացելով քո լույս հայտնության:
Տաճարդ աղոթք է գիշեր ու ցերեկ՝
Քո անունն հագած՝ քո սուրբ հարության:
Քրիստոս տեսած՝ Մայր տաճարների
Ուխտավորներդ՝ արար աշխարհից,
Քո ոտքն են գալիս՝ հույս համբուրելի:
Կենդանի ջուր ես, փրկյա՛մ մեզ չարից:
Ու ցույց տուր ճամփան այսու եւ կրկին,
Մոլորյալներին քո դռները բաց,
Եվ թող պանծանա անունը Մեր հին...
Արեգակ արդար՝ Քրիստոս Աստված:

**Մերուժան ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ**

# Նրանք եկան գուգլ մապով, ջիպիեսով, կոորդինատներով, 2 քարտեզով եվ մեծ տրամաչափի խոշորացույցով

ՈՍՓ

Քաղաքում նոր փողոց կառուցեցին: Այնքան նոր, որ այն իրականությանը միանգամից չհարմարվեց: Բայց դա չխանգարեց, որ բացման արարողությունը պետական կարեւորության իրադարձություն համարվի: Կտրեցին ժապավենը, օրհնեցին ասֆալտը, այն փայլում էր այնպես, ինչպես երկրի տնտեսական աճը: Խոսեցին ապագայի մասին՝ այնքան վստահ, կարծես ապագան արդեն հանձնված էր շահագործման: Փափուկ, արագընթաց մեքենաներում նստած՝ կառավարությունից ժամանած նախարարները, քաղաքի հայրերը հանդիսավոր շրջայց կատարեցին: Մեքենաների ապակիները մգեցված էին՝ պետական գաղտնիք ու խորհրդավորություն խորհրդանշելով: Այդ պատճառով էլ նրանք չտեսան ասֆալտի վրա հազիվ նշմարվող մի փոքրիկ, աննշան ճեղք: Փոս էլ չէր՝ ասեղի ծայրի չափ մի թեթեւ անհամաձայնություն էր պետական ծրագրի հետ: Բայց, ինչպես հաճախ է լինում, փոքրից սկսվում են պետական լուրջ ծրագրերը: Այո, փոքր էր, բայց այնքան իրական, որ ժողովուրդը նկատեց: Որովհետեւ ժողովուրդը փողոցն անցավ ոտքով: Ժողովուրդը, ինչպես միշտ, աչքով է չափում իրականությունը: Նկատեց՝ անհանգստացավ: Անհանգստացավ՝ դիմեց, բարձրացրեց հարցը համայնքապետարանում:

Էստեղից դիմեցին վերեւ՝ ինչ անենք: Վերեւից՝ ներքեւ. «Ճեղքը փակեք, զեկուցեք»: Համայնքապետարանից մասնագետներ գործուղվեցին՝ ճեղքը հայտնաբերելու նպատակով: Նրանք եկան գուգլ մափով, ջիպիեսով, կոորդինատներով, երկու քարտեզով եւ մեծ տրամաչափի խոշորացույցով, որպեսզի համոզվեն, որ ճեղքը չի թաքնվել քաղաքաշինական դավադրության հետեւում: Երկու ժամ տեւած որոնումներից հետո գտան փողոցը, երրորդ ժամին՝ ճեղքը: Ճեղքը գրանցվեց որպես «մակերեսային տեղային ժամանակավոր անհարթություն»: Բացվեց գործ: Կազմվեց արձանագրություն: Ճեղքի գոյությունը ստացավ պաշտոնական հավաստագիր: Այն փաստաթղթերում անվանվեց «մունիցիպալ զարգացման բնական հակառակորդ» եւ «ինքնաբուխ ընդդիմադիր տարր»: Վերջապես՝ ճեղքը ներառեցին պետական ռեգիստրում՝ որպես ժամանակավոր գեոդեզիական խախտում:

Տասն օր անց նոր խումբ ուղարկեցին՝ ֆինանսական հաշվարկ կատարելու: Տասն օր պահանջվեց, որպեսզի հաստատվեն նրանց գործուղման օրապահիկի, գիշերակացի հարցերը: Նախ, պիտի պարզեին՝ ճեղքը մեկանգամյա՞ է, թե՞ երկարաժամկետ: Մասնագետները վերադարձան եզրակացությամբ. ճեղքը պահանջում է համալիր մոտեցում: Նախագծա-նախահաշվային բաժնում կազմվեց «Ճեղքային երեւույթների կանխարգելման եւ վերացման հայեցակարգ 2025-2035»: Ճարտարապետական բաժնում հայեցակարգը հաստատեցին: Ֆինանսականում վերանայեցին: Իրավաբանականում պարզեցին, որ նախ պետք է պարզել՝ արդյոք ճեղքն օրինակա՞ն է առաջացել: Վերջապես փաստաթղթերը հասան նախարարներին: Քաջասրունք եւ հեռատես նախարարները հայտարարեցին, որ պետությունը վճռական է եւ անհաշտ պայքար է մղում ճեղքային դրսեւորումների դեմ: Հայտարարվեց մրցույթ: Մասնակցեց շուրջ հարյուր կազմակերպություն: Հաղթեց «Կայծակշին» ՍՊԸ-ն: ՍՊԸ-ն նախ վերանորոգեց իր տեխնիկան, հետո՝ տեխնիկայի համար նախատեսված պահեստը: Այնուհետեւ մրցույթ հայտարարեց՝ նոր տեխնիկա ձեռք բերելու համար: Տեխնիկան ձեռք բերվեց: Աշխատանքի ընդունվեցին բարձրակարգ ասֆալտագործներ: Հաստատվեց ճեղքի ճշգրիտ հասցեն վերահաստատելու հանձնաժողովի կազմը: Երբ շինարարները տեղ հասան՝ ճեղքը չգտան: Ձմեռ էր՝ ձյունը ժամանակավորապես ստանձնել էր քաղաքաշինական «պատասխանատվությունը», ծածկույթի պարտականությունները: Պետական մակարդակով խնդիրը լուծված էր: Գարունը եկավ, ձյունը հալվեց, ճեղքը վերադարձավ՝ լիարժեք փոսի կարգավիճակով: Աճել էր, մեծացել՝ հաստատվել: Բնակիչները կրկին դիմեցին: Վերեւից՝ ներքեւ. «Ծածկեք՝ զեկուցեք»: Նոր հաշվարկներ: Նոր նախագիծ: Նոր նախահաշիվ: Նոր պայքար՝ ճեղքային երեւույթների դեմ: Երբ շինարարները վերջապես տեղ հասան... փողոցը չգտան՝ մնացել էր փաստաթղթերում:

**Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ**

# Հայկական կինոյով հիացած ադրբեջանցի կինոգետը

Սովետահայ կինոյի պատմությունն ուսումնասիրելիս անհնարին է, որ չհանդիպենք մի անվան, որը գուցե հիմա որոշ տարակուսանք առաջացնի: Սակայն սովետական իրականության պայմաններում լիովին բնականոն էր դա: Խոսքը սովետահայ կինոյի պատմության ուսումնասիրողներից կինոգետ, ազգությամբ ադրբեջանցի Սաբիր Ռիզաեւի մասին է, որը գրել է հայ կինոյի մասին, հիացած է եղել հայ կինոյով եւ ամենեւին չի թաքցրել իր հիացմունքը:

Ռիզաեւը ծնվել է Երեւանում, 1924 թվականին, մահացել 1978-ին՝ Երեւանում, մտավորականի ընտանիքում: Հայրը՝ Աքբար Ռիզաեւը, աշխատել է Մոսկվայում՝ «Ինոստրաննայա լիտերատուրա» պարբերականում՝ թուրքական գրականության խմբագրությունում: Ավարտել է Երեւանի Պուշկինի անվան դպրոցը, ուսումը շարունակել Մոսկվայում: 1942 թվականին կամավոր մեկնել է ռազմաճակատ, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: Պատերազմից հետո վերադարձել է Երեւան եւ սկսել հրատարակվել տեղի մամուլում՝ հեղինակելով կինոյի եւ թատրոնի մասին քննադատական հոդվածներ: Ավարտել է Երեւանի թատերական ինստիտուտը՝ 1951 թվականին, իսկ հետո նաեւ՝ 1954-ին, Թատրոնի, կինոյի եւ երաժշտության Լենինգրադի ինստիտուտը: 1954-ից ղեկավարել է «Հայ կինոյի» սցենարի բաժինը: Եղել է «Հայպետկինոկոմիտեի» գլխավոր խմբագիրը:

1965-ից եղել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի փոխտնօրենը, Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության վարչության քարտուղարը: Ավելի քան 20 գիտական աշխատության հեղինակ է, ներառյալ՝ նաեւ հայ կինոյի եւ հայ կինոգործիչների մասին մենագրությունների հեղինակ: Այդ շարքում կարելի է հիշել «Հայկական գեղարվեստական կինեմատոգրաֆիան»՝ հրատարակված 1963-ին, Հրաչյա Ներսիսյանի եւ Վարդինե Աջեմյանի մասին մենագրությունները: Մասնակցել է բազմաթիվ կինոնկարների սցենարական աշխատանքներին: Ազգությամբ ադրբեջանցի լինելով՝ լիովին տիրապետել է ռուսերենին եւ հայերենին: Գրել է հիմնականում ռուսերենով, սակայն ունի նաեւ հայերենով աշխատանքներ: 1975 թվականին արժանացել է Սովետական Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի կոչման: Մահացել է 1978-ին՝ կոնֆերանսի ժամանակ՝ զեկույց ներկայացնելիս: Ռիզաեւը մեծ հարգանք ու հիացմունք է ունեցել թե՛ հայկական կինոյի, թե՛ նրա անվանի գործիչների եւ դերասանների նկատմամբ՝ լիովին ինտեգրված է եղել սովետահայ մշակութային կյանքի մեջ:

**Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ԻՏԱԼԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՂՈՂԱՆՋՆԵՐԸ

«Այսօր Իտալիայում ավարտվում են Ձմեռային օլիմպիական խաղերը, որին, չնայած հայ մարզիկների մասնակցությանը, որեւէ ֆունկցիոնալ մասնակցություն չի ունեցել Հայաստանի օլիմպիական կոմիտեի նախագահ Գագիկ Ծառուկյանը: Այս օլիմպիական խաղերը մեզ համար նշանավորվեցին դրանով, որ Ադրբեջանի օլիմպիական կոմիտեի պահանջով հայ գեղասահորդների նախընտրած գեղարվեստական ստեղծագործությունից զեղչվեց «Արցախ» անվանումը, իսկ Հայաստանի օլիմպիական կոմիտեի նախագահն այդ օրերին ոչ թե զբաղված էր հայ մարզիկների սպորտային շահերի պաշտպանությամբ, այլ Վարդենիսում մասնակցում էր նոր սառնարանային տնտեսության մթերման կայանի բացման արարողությանը, հորդորելով տեղի բնակիչներին՝ կարտոֆիլի փոխարեն գազար եւ բրոկոլի աճեցնել: Հայաստանին առաջարկներ անելու փոխարեն, գուցե պետք է, որ Հայաստանում ամեն մարդ իր գործով զբաղվի եւ պատասխանատվություն կրի ամեն ձախողման ու չարածի համար»: Սա հայ իրականությանը ոչ անհայտ հասարակական գործիչ, ՀՀ վարչապետին եւ Հ1-ի Պետրոսին ահավոր չսիրող Էդգար Ղազարյանի գրառումն է: Որոշեցի Էդգար Ղազարյանի գրառմանն անդրադառնալ հոդվածի ձեւաչափով, որովհետեւ մեկնաբանությունների հնարավորությունը փակել է, եւ ուզում եմ՝ մարդիկ իմանան, թե ՀՀ գործող վարչապետին այդքան չսիրող Էդգարն ուր է հասել դեռ կարգին չձեւավորված ընդդիմադիր ճակատը պառակտելու, ընդդիմության ավտոյի անիվները ծակելու եւ ընդդիմության հասցեին մանր-մունր այլ խուլիգանություններ անելու գործում: Պարոն Ղազարյան, ցավով եմ ասում՝ դա Ձեզ չի սազում: Մի արեք: Նարեկ Մալյանին էլ հորդորեք՝ նույնը չանել: Դրա համար լավ ժամանակներ դեռ կգան… Հիմա՝ մի արեք:

Ինչ վերաբերում է բուն գրառմանը, ապա անզեն աչքով էլ կարելի է նկատել, թե Էդգար Ղազարյանն ինչ հրաշալի նյութ է տվել ՔՊ-ական մեդիա-սբրոդին՝ քննադատելու Հայաստանի օլիմպիական կոմիտեի նախագահ Գագիկ Ծառուկյանին եւ նրա «Առաջարկ Հայաստանին» ծրագիրը: Միտումնավո՞ր է արել… Ով՝ ով, բայց Էդգար Ղազարյանը չէր կարող չիմանալ, որ Հայաստանի օլիմպիական կոմիտեի նախագահն ինչ էլ աներ, չէր կարող ազդել Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարների «միահամուռ» համաձայնության վրա՝ զեղչել ոչ միայն «Արցախ» անունը, այլեւ այդ անվան հետ կապված ամեն բան: Նա ումի՞ց պետք է պահանջեր, որ «Արցախ» բառն անպայման հնչեր Իտալիայում: Իսկ գուցե, այնուամենայնիվ, պահանջել է, բայց նրա պահանջը բանի տեղ չե՞ն դրել՝ անսալով այդ անվան վրա Ադրբեջանի եւ Հայաստանի համատեղ վետոյին: Եվ, ուրեմն, Էդգար Ղազարյանն ինչո՞ւ է այս գրառումն արել…

Տառացիորեն մի քանի օր առաջ ՀՀ իշխանությունն ու ընդդիմությունը, շունչները պահած, սպասում էին ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանի հայտարարությանը՝ առաջիկա ՀՀ ԱԺ ընտրություններին մասնակցել-չմասնակցելու մասին: Դա, իհարկե, նշան էր այն բանի, որ թե՛ ԲՀԿ-ն եւ թե՛ Գագիկ Ծառուկյանը շատ բան կարող էին փոխել իշխանական եւ ընդդիմադիր ուժերի հարաբերակցության մեջ՝ դիրքավորվելով քաղաքական դաշտի այս կամ այն թեւում: Գագիկ Ծառուկյանը, սակայն, գործեց շատ զգույշ եւ խոսեց ընտրություններին «Առաջարկ Հայաստանին» ծրագրով մասնակցելու մասին՝ կոչ անելով վերկուսակցական համախմբման, ինչը, ես կասեի, հազար քայլով առաջ էր ՔՊ-ի՝ «մեզնից թող լինի, թեկուզ պոլի փետ» լինի կարգախոսից: Իսկ հիմա պատկերացրեք, թե ում ճամբարում կհավաքվեն այն մի քանի տասնյակ մանր-մունր քաղաքական-հասարակական ուժերն ու գործիչները, որ այս 8 տարիներին արհամարհված մնացին ՔՊ-ի կողմից՝ միեւնույն ժամանակ հիասթափված այդ «քաղաքական» ուժի վարած ինչպես արտաքին, այնպես էլ ներքին «քաղաքականությունից»: Սրանց ավելացրեք ԲՀԿ-ի, Գագիկ Ծառուկյանի կայուն ընտրազանգվածը, եւ պարզ կդառնա, թե իրականում ինչ ուժ կարող է ձեւավորվել ընդդիմադիր դաշտում: Ու այնպես էլ չէ, որ Գագիկ Ծառուկյանն իր «տապանի» դռները լայն բացել է բոլորի առաջ: Պատեհապաշտներին՝ պաշտոնի, մանդատի համար եկողներին, ասում է, որ այստեղ տեղ չունեք: Սա նույնպես մեծացնում է «կոնկուրսը», կոնկուրենցիան: Մենք հնարավորություն ենք ստացել՝ ի վերջո ճանաչելու հենց նրանց, որ միշտ հանուն պաշտոնի ու դիրքի են խցկվել այս կամ այն ուժի ցուցակ: Այնպես որ, վատ չէր լինի, եթե բոլոր ընդդիմադիր բլոկներն այսպիսի ֆիլտրեր տեղադրեին մուտքի մոտ:

Գաղտնիք չէ, որ ՔՊ-ի ընտրազանգվածի մի ահռելի մաս, հատկապես շարքային քաղաքացիներ, որ իրենց մեղավոր չեն համարում պարտված ու բոլոր ուղղություններով պերմանենտ պարտվող ՔՊ-ին ցուցաբերած աջակցության համար, այսօր հայտնվել են շատ հետաքրքիր կացության առաջ՝ ո՞ւմ ընտրել: Ծառուկյանի «տապանը», կարծում եմ, եթե ոչ լավագույն, ապա այն հարմար վայրն է, որտեղ կարելի է աստիճանաբար թոթափել «մեղքի» զգացումն ու վերագտնել հայ մարդու արժանապատվությունը: «Առաջարկ Հայաստանին» ծրագիրը, այո, իր հետեւից տանելու է ՔՊ-ի մի ահռելի ընտրազանգված՝ այդկերպ նպաստելով ընդդիմադիր «միասնական ճակատի» ձեւավորմանը: Ընդ որում, կարիք էլ չկա, որ Գագիկ Ծառուկյանը հատուկ թղթեր ստորագրի ընդդիմադիր մյուս բեւեռների հետ, երդումներ տա, հայտարարություններ անի, որ ոչ մի պարագայում չի համագործակցի ՔՊ-ի հետ: Կգա ժամանակը, բոլորով բարեհաջող կերպով կհաղթեն ՔՊ-ին, կվռնդեն խորհրդարանից, իսկ այնտեղ արդեն թող որոշեն, թե ում հետ կոալիցիա կազմի:

Ասելս ի՞նչ է… Հարգելի Էդգար Ղազարյան, ժամանակն է, որ մեր կուսակցական նկրտումները թողնենք մի կողմ ու լծվենք այս չարիքի իշխանության հեռացման աշխատանքներին: Դա շատ հեշտ է անել, եթե քաղաքական պրոցեսներին վերաբերվում ես լուրջ եւ կարողանում ես գնահատել որոշակի համոզմունքներ ունեցող քաղաքական գործիչներին: Մարդկանց սեւացնելը թերեւս ամենադժվար ու ամենաանշնորհակալ գործն է: Ուստի առաջարկում եմ՝ գոնե այս փուլում խառնակչությամբ չզբաղվել: Դա մեզ լավ տեղ չի կարող տանել, եթե, իհարկե, չեք տառապում այս իշխանությունների «մշտական» ընդդիմախոսը լինելու մարմաջով:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 24.02.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

# ԽԵՂՎԱԾ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Նիկոլն ու նիկոլականները զարմանալի պատկերացում ունեն խաղաղության մասին: Նրանց թվում է, թե խաղաղությունը միայն այն է, երբ սահմաններին չեն կրակում: Իսկ որ այդ չկրակելու համար քեզնից չհիմնավորված զիջումներ են պահանջում ու ստանում, դա իրենց կարծիքով ոչ թե պատերազմի, այլ՝ խաղաղության պատմություն է:

Այնինչ կյանքն ու իրականությունը բոլորովին այլ բանի մասին են վկայում: Այն մասին, որ պատերազմի չլինելը միայն սահմաններին չկրակելով չի լինում, որ խաղաղության գինը ոչ թե չկրակելու համար թշնամուն ամեն ինչ տալն է, այլ նրա չարդարացված պահանջները մերժելը: Այս առումով, անկախ նրանից, թե իր բերած «խաղաղության» մասին Նիկոլն ինչ հեքիաթներ է պատմում, անկախ նրանից, թե մինչեւ 2020-ը եղած խաղաղությանը նա ինչ պիտակներ է կպցնում, միեւնույն է՝ 2020-ից «առաջ» եղած Հայաստանը 2020-ից հետո եկած Հայաստանից ավելի քիչ խաղաղություն ունեցող երկիր չէր: Որովհետեւ, եթե 2020-ից առաջ թշնամին միայն սահմանին էր կրակում, բայց սահմանը խախտել չէր համարձակվում, հիմա արդեն սահմանին չկրակելու համար ոչ միայն ՀՀ օկուպացված տարածքներից դուրս չի գալիս, այլ նաեւ ՀՀ Սահմանադրություն փոխել ու 300 հազար ադրբեջանցու «ընդունել» է պարտադրում: Դե հիմա եկեք մեզ համոզենք, որ 2020-ից «առաջ»-ի Հայաստանի խաղաղությունը 2020-ից «հետո»-ի Հայաստանի խաղաղությունից ավելի լավ ու ավելի իրական խաղաղություն չէր:

Եվս մի հանգամանք, որին չանդրադառնալ չենք կարող: Նիկոլն ու իր խմբակն այսօր ոչ միայն ասում են, այլ նաեւ պնդում, որ եթե իրենք չլինեն իշխանություն, ապա ոչ միայն խաղաղություն չի լինի, այլեւ պատերազմ կլինի: Ամեն անգամ սրանց այս հեքիաթները լսելուց ուզում եմ իրենց մի հարց տալ՝ բայց ո՞ւմ ասաց, որ եթե այսօր սահմանին չեն կրակում, ապա չեն կարակում միայն այն պատճառով, որ Նիկոլն է իշխանության, եւ, ընդհակառակը՝ անպայման կկրակեն, եթե Նիկոլը չլինի իշխանության:

Ճիշտ հակառակը, եթե այսօր սահմաններին չեն կրակում, ապա չեն կրակում, որովհետեւ Ամերիկան չի ուզում, որ կրակեն: Իսկ չի ուզում ոչ թե այն պատճառով, որ Նիկոլը խաղաղության համար շատ բան է անում, այլ որովհետեւ իրենց պետք է Թրիփն աշխատեցնել:

Նույնն է նաեւ Ռուսաստանի պարագայում: Եթե այսօր Ռուսաստանը չի ուզում, որ հայ-ադրբեջանական սահմանին կրակոցներ լինեն, ապա դա չի ուզում ոչ թե այն պատճառով, որ վախենում է Նիկոլի հակառուսականությունից, այլ որովհետեւ իրեն երկրորդ ճակատ պետք չէ:

Այս տեսակետից, կրակոցներով շահագրգռված միակ կողմը, թերեւս, թուրք-ադրբեջանական տանդեմն է: Բայց, ի տարբերություն 2020-ի, երբ կար համընդհանուր կոնսենսուս, սրանք այսօր ո՛չ կոնսենսուս եւ ո՛չ էլ ռազմատնտեսական ռեսուրսներ չունեն: Չունեն, որովհետեւ լավ են հասկանում, որ հիմա, երբ տարածաշրջանում եւ աշխարհում այսպիսի անկանխատեսելի գործընթացներ են գնում, իրենց նման երկրների համար ամենավտանգավորն աշխարհաքաղաքական կենտրոնների կարմիր գծերը խախտելն է: Այս իմաստով, միակ բանը, որը նրանք դեռ կարող են անել, դա Նիկոլին իշխանության պահելով՝ Հայաստանի հզորանալուն խոչընդոտելն է:Կարող են անել ու հենց դա էլ անում են: Իսկ անում են, որովհետեւ, ի տարբերություն մեզ, պատմությունը կարդալ ու իրավիճակը վերլուծել գիտեն:

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am